

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Նախագահ Պայտրոնի Կ'ակնկալուի Աւելի Ազդու Քայլեր

Ամերիկեան Գոնկրէսի անդամ Ատամ Շիֆ նամակով մը դիմած է Միացեալ Նահանգներու Նախագահ Գո Պայտրոնին, որպէսզի ան անձնապէս կապուի Ատրպէյճանի իր պաշտօնակից Ալիեւի հետ եւ նախագուշացնէ անոր Լեռնային Ղարաբաղի շրջափակման հետեւանքներուն մասին՝ մերառեալ պատժամիջոցները եւ ամերիկեան օգնութեան դադրեցումը:

«Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը անյապաղ օգնութեան կարիք ունի, մերառեալ քաղաքացիներու ամենախոցելի խումբերը՝ յղի կանայք, երեխաները եւ ծերերը: Դեղորայք ու մանկական սնունդ գրեթէ չէ մնացած, իսկ իշխանութիւնները յայտարարած են թերսնման եւ դեղերու բացակայութեան պատճառով հիւանդացութեան եւ մահացութեան յաճախակիացման մասին: Յղիներուն մօտ արեան երկիրներու տկարութեան դէպքերը հասած են 90%-ի, իսկ սովէն ուշագնացութեան դէպքերը մշտապէս կ'արձանագրուին: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը բախած է սովի իրական սպառնալիքին՝ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի ծրագրին համապատասխան», գրած է Շիֆ:

Մօտ 9 ամիսներէ ի վեր Արցախի 120 հազար հայութիւնը կը գտնուի մնայուն շրջափակման մէջ: Այս ընթացքին այլազան երկիրներու եւ կազմակերպութիւններու յորդորներն ու կոչերը, ինչպէս նաեւ Միջազգային դատարանի պարտադիր որոշումները անտեսուեցան Ատրպէյճանի կողմէ: Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղար Էնթոնի Պլինքընի կոչերն ու Ալիեւի հետ ունեցած շարք մը հեռաձայնային խօսակցութիւնները եւս մնացին ապարդիւն: Պլինքընի նախաձեռնած Երեւան-Պաքու Ուաշինկթըն-Եան բանակցութիւնները եւս մատուցեցան ձախողութեան, քանի Ատրպէյճան կը մերժէ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի իրաւունքներու ճանաչումը:


Շրջափակման երկար ամիսներու ընթացքին Սպիտակ Տունը եւ Նախագահ Պայտրոն անձնապէս հրապարակային ոչ մէկ խօսք ըսին Արցախահայութեան վիճակի մասին: Նոյնիսկ Նախագահի Ապրիլ 24-եան պատգամին մէջ ակնարկութիւն չկար Լեռնային Ղարաբաղի մէջ տիրող իրավիճակի մասին: Նախագահ Պայտրոն իր պաշտօնի

Ատամ Շիֆ Կոչ Կ'ընէ Նախագահ Պայտրոնին Անձնապէս Զգուշացնելու Ալիեւին՝ Շրջափակման Զետեւանքներու Մասին

Ամերիկայի նախագահ ճօ Պայտրոն պէտք է կապ հաստատէ Ատրպէյճանի ղեկավար Իլհամ Ալիեւի հետ եւ նախագուշացնէ զայն Լեռնային Ղարաբաղի շրջափակման հետեւանքներուն մասին՝ ներառեալ պատժամիջոցները եւ ամերիկեան օգնութեան դադրեցումը: Այս մասին նախագահին ուղղուած նամակին մէջ գրած է գոնկրէսական Ատամ Շիֆը:

Շիֆ յիշեցուցած է, որ ինք նախագահին արդէն գրած է Յունիս 8-ին ԼՂ շրջափակման վերաբերեալ: Այդ ժամանակէն ի վեր ճգնաժամը շատ աւելի սրած է եւ կը պահանջէ Միացեալ Նահանգներու ղեկավարին անձնական եւ անյետաձգելի ուշադրութիւնը, նշած է գոնկրէսականը:

«2022 թուականի Դեկտեմբերէն Ղարաբաղի 120 հազար բնակիչ զրկուած է սննդամթերքի, դեղորայքի, կազի եւ էլեկտրականութեան բնական մատակարարումէն, իսկ քանի մը շաբաթ առաջ Ատրպէյճանը ամբողջութեամբ փակած է Լաչինի միջանցքը նոյնիսկ կարմիր խաչին համար: Անվիճելիօրէն, այս իրավիճակը վերաճած է մարդասիրական սուր ճգնաժամի, ինչ-



Նախագահ Գո Պայտրոն

պէս Օգոստոս 7-ին նշած է ՄԱԿ-ի փորձագէտներու խումբը», նշած է Շիֆ:

Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը անյապաղ օգնութեան կարիք ունի, ներառեալ քաղաքացիներու ամենախոցելի խումբերը՝ յղի կանայք, երեխաները եւ ծերերը: Դեղորայք ու մանկական սնունդ գրեթէ չէ մնացած, իսկ իշխանութիւնները յայտարարած են թերսնման եւ դեղերու բացակայութեան



Գոնկրէսական Ատամ Շիֆ

պատճառով հիւանդացութեան եւ մահացութեան յաճախակիացման մասին: Յղիներուն մօտ արեան տկարութեան դէպքերը հասած են 90%-ի, իսկ սովէն ուշագնացութեան դէպքերը մշտապէս կ'արձանագրուին: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը բախած է սովի իրական սպառնալիքին՝ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի ծրագրին

Երեւանի Սէջ Նշուեցաւ ՀՄՄ-ի 100-Ամեակը



ՀՄՄ-ի փողերախումբը կը տողանցէ Երեւանի Հիւսիսային պողոտային վրայ


Հայ Մարմնամարզական Միութեան՝ ՀՄՄ-ի 100-ամեակը նշուեցաւ Երեւանի մէջ, անցնող շաբաթավերջին տեղի ունեցած շարք մը միջոցառումներով:

Ուրբաթ, Օգոստոս 11-ի առաւօտեան Հայաստանի, Լիբանանի, Հալէպի եւ Դամասկոսի միացեալ փողերախումբի անդամները տողանցեց մայրաքաղաքի գլխաւոր հրապարակներով՝ հասնելու համար «Կինօ Մոսկուա» թատրոն, ուր տեղի ունեցաւ 100-ամեակի նուիրուած պաշտօնական հանդի-

սութիւն: Օրուայ հանդիսավարներ՝ Նազելի Էպէեան-Նալպանտեան եւ Ժան Մելիքեան կատարեցին միջոցառման հանդիսավարութիւնը, որուն սկզբնաւորութեան ընթերցուեցաւ ՄԴՀԿ կեդրոնական վարչութեան գնահատանքի խօսքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի խօսքը փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Եփրեմի Վանքի Մուշեղ Եպիսկոպոս

Այժմ Առաջնահերթ Խնդիրն Է Դադրեցնել ԼՂ Հայերու Ցեղասպանութիւնը. Օրբանփօ



Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենօ Օրբանփօ

Միջազգային Քրեական Դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենօ Օրբանփօ կրկին մեկնաբանելով իրավիճակը Լեռնային Ղարաբաղի մէջ «X-ի» (նախկին թուրքեր) վրայ գրած է. «Այժմ

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ստեփանակերտի Արտաքին Քաղաքական «Բազմաձայնությունը» Խանգարում է Արցախին

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ատրպեյջանը վերջին ամիսների ընթացքում զգալիորեն մեծացրել է ճնշումը Արցախի նկատմամբ՝ սեփական առաւելապաշտական օրակարգը Ստեփանակերտին պարտադրելու համար: Արցախի ամբողջական շրջափակումը այդ ճնշման քաղաքականութեան մէջ օգտագործուող ամենակոշտ գործիքն է: Այնուամենայնիւ, Պաքուն ակտիւորէն կիրառում է նաեւ դիւանագիտական ու քաղաքական գործիքակազմ՝ գետնի վրայ սեփական քայլերը լեգիտիմացնելու համար: Այս գործընթացում շատ յաճախ օգտագործւում են նաեւ արցախեան տարբեր պաշտօնեաների քայլերն ու յայտարարութիւնները:

Ստեղծուած իրավիճակում, կարծես թէ, յատկապէս արտաքին քաղաքական թեմաներով տեղեկատուական համակարգուած քաղաքականութեան ձեւաւորումը պէտք է լինէր առաջնահերթութիւն Արցախի իշխանութիւնների համար: Ակնյայտ է, որ այս փուլում Արցախի պաշտօնատար անձանց նկատմամբ արտաքին աշխարհի ուշադրութիւնը աւելին է, քան երբեք: Հայաստանի իշխանութիւնների՝ Արցախից հեռաւորութիւն պահելու քաղաքականութիւնը ակամայ սուբիեկտիւութեան որոշակի աստիճան է տուել Ստեփանակերտին: Այդ առումով ամէն մի անգ-

գոյշ քայլ ու յայտարարութիւն կարող է ունենալ յստակ հետեւանքներ:

Այնուամենայնիւ, այս փուլում հակառակ պատկերի ականատեսն ենք դառնում: Ստեփանակերտում կան պաշտօնեաների խմբեր, որոնք, չգիտես ինչու, ստանձնել են արտգործնախարարութեան գործառույթները եւ պարբերաբար անում են զգայուն ու նրբանկատութիւն պահանջող թեմաներով յայտարարութիւններ:

Նմանատիպ պաշտօնեաների մի քանի խմբեր գոյութիւն ունեն: Առաջին խմբի մէջ են մտնում նախագահի խորհրդականները, որոնք թիւը Ղարաբաղեան երկրորդ պատերազմի աւարտից յետոյ աճել էր երկրաչափական պրոգրեսիւսով: Արտաքին քաղաքականութեան համար պատասխանատու խորհրդականները պարբերաբար հանդէս են գալիս յայտարարութիւններով, որոնք յաճախ հակասում են Ստեփանակերտի պաշտօնական դիրքորոշումներին: Նրանցից ոմանք կամ ընդհանրապէս համապատասխան գիտելիքներ չունեն, կամ ակտիւորէն ներգրաւուած չեն տարբեր միջազգային դերակատարների հետ շփումներում, կամ էլ կտրուած են իրականութիւնից:

Պաշտօնեաների երկրորդ խումբը, որի մօտ արտաքին քաղաքական հարցերով հրապարակային կարծիք արտայայտելու մղում գո-

յութիւն ունի, պետնախարարն է եւ իր խումբը: Արցախում պետնախարարը կամ վարչապետը երբեք արտաքին քաղաքականութեամբ զբաղուելու գործառույթ չի ունեցել: Ներկայիս իրավիճակը բնական չէ: Յատկապէս, եթէ հաշուի ենք առնում, որ գործող պետնախարարը եւս արտաքին քաղաքականութեան վերաբերեալ սիրողական պատկերացումներ ունի, եւ այս ուղղութեամբ իր մեկնաբանութիւնները ոչ միայն որեւէ աւելացուած արժէք չեն տալիս, այլեւ երբեմն կարող են վնասել տարբեր գործընթացներ:

Արտաքին քաղաքական հարցերով տեսակէտներ յայտնող պաշտօնեաների շարքում են նաեւ ԼՂՀ Ազգային ժողովի պատգամաւորներն ու նախագահին կից ստեղծուած տարբեր մարմինների անդամները: Սովորական պայմաններում խորհրդարանականները արտաքին քաղաքական ուղղութեամբ գործունէութիւն ծաւալելու գորածառույթ ունենում են: Այնուամենայնիւ, հաշուի առնելով առկայ բարդ իրավիճակը, ինչպէս նաեւ այս գոմարման Ազգային ժողովի պատգամաւորների պատրաստուածութեան աստիճանը, նրանց կողմից արուող յայտարարութիւնները տարբեր զգայուն թեմաներով եւս յաճախ օգտագործւում են Ատրպեյջանի կողմից Հայաստանի եւ Արցախի դէմ պատումների պատե-

րագմում: Նոյնը վերաբերում է նաեւ նախագահին կից գործող մարմինների անդամներին:

Վերջին շրջանում նմանատիպ չհաշուարկուած ու չհամաձայնեցուած մի շարք յայտարարութիւններ են արուել, որոնք օգտագործուել են ատրպեյջանական քարոզչութեան կողմից:

Մասնաւորապէս, ամիսներ առաջ, երբ ամերիկեան կողմի միջնորդութեամբ հանդիպումը Արցախի եւ Ատրպեյջանի ներկայացուցիչների միջեւ Պոլկարիայում տեղի չունեցաւ, իշխանական պատգամաւոր Արթուր Յարութիւնեանը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում յայտնել էր, որ Ստեփանակերտն է հրաժարուել մասնակցել այդ հանդիպմանը: Մինչդեռ, ԼՂՀ ԱԳՆ դիրքորոշումը այն էր, որ Ստեփանակերտը չի հրաժարուել հանդիպմանը մասնակցելուց, բայց այդ բանակցութիւնների հետ կապուած մի շարք հարցերում դեռեւս յստակութիւն պէտք էր մտցնել:

Ատրպեյջանական քարոզչամեքենան բնականաբար անմիջապէս օգտագործել էր Յարութիւնեանի հարցազրոյցը՝ սեփական ազդեակ գործելու գեղարվեստի վրայ արդարացնելու համար: Օրեր շարունակ շրջանառութեան մէջ էր դրուել Ստեփանակերտի ապակա-

Շար.ը էջ 18

Հայաստանի Կառավարութեան Մեծ Գայթակղութիւնը Ու «Վագրի» Նախադէպը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱՆԵԱՆ

Կապիտալ շինարարութիւնը այսօր Հայաստանի տնտեսութեան ամենատեսանելի եւ առաջ մղող ուժն է, Հայաստանում շինարարի օրուայ կապակցութեամբ միջոցառմանը յայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Կապիտալ շինարարութիւնը Հայաստանի տնտեսութեան համար այդպիսին էր նաեւ մօտ մէկուկէս տասնամեակ առաջ, ինչը ժամանակի իշխանութեանը թոյլ էր տալիս խօսել Հայաստանի տնտեսութիւնը «կովկասեան վագր» բնորոշելով: Եւ իսկապէս, Հայաստանի տնտեսութիւնը վիճակագրական ցուցանիշով առաջատարն էր Կովկասում: Բայց, յետոյ յանկարծ պարզուեց, որ կապիտալ շինարարութեան վրայ չիմնուած աճը փուչիկ էր: Աւելին, դա ոչ միայն ընդգիծութեան գնահատականն էր, այլ գործչի, որն այդ տարիներին եղել էր Հայաստանի ԿԲ նախագահ, իսկ 2008 թուականին վարչապետ էր նշանակուել Սերժ Սարգսեանի ձեւաւորած կառավարութիւնում՝ Տիգրան Սարգսեանը: Նրա գնահատմամբ, կապիտալ շինարարութեան բուռն տեմպի վրայ ձեւաւորուած երկնիշ աճը եղել էր սպեկուլիտիւ: Հայաստանի քաղաքացիները դրանում համոզուեցին այն բանից յետոյ, երբ Հայաստանի երկնիշ թռիչքներ անող տնտեսութիւնը համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում ունեցաւ երկնիշ անկում, որը ամենախոշորներէից էր աշխարհում: Տարածաշրջանի «վագրը» վերածուեց «կատուի»:

Այսօր Հայաստանի իշխանու-

թիւնը չի օգտագործում «վագր» կամ «առիւծ» բնորոշումը, սակայն անթաքտց հպարտանում է, որ Հայաստանը տնտեսական վիճակագրութեամբ գերազանցում է ռեգիոնի միւս երկրներին: Դա անշուշտ հիանալի է, սակայն նախորդ փորձը ստիպում է հարցնել՝ իսկ ինչո՞վ է տարբերում ներկայիս աճի որակն ու բնոյթը: Գրեթէ ոչնչով, որովհետեւ, օրինակ նոյն կապիտալ շինարարութեան ծաւալների աճը թելադրուած չէ գնողունակ պահանջարկի աճով: Իհարկէ, այնպէս չէ, որ կառուցող բնակարանները չեն վաճառուում: Բայց, դրանց գերակշռող մասը «գնում» է ոչ թէ Հայաստանի տնտեսութեան ձեւաւորած գնողունակ պահանջարկի, այլ որոշակի սպեկուլիտիւ գործօնների շնորհիւ: Մասնաւորապէս, պետութիւնը եկամտահարկով սուբսիդաւորում է բնակարանների գնման գործընթացի մի հսկայական մաս: Միւս մասը ձեռք է բերում արտաքին ռեսուրսներով, այսինքն՝ բնակարաններ գնում են սփիւռքահայերը, կամ Ռուսաստանից Հայաստան տեղափոխուած ռեզիդենտների մի մասը:

Այլ կերպ ասած, կապիտալ շինարարութեան «անուցումը» Հայաստանի տնտեսութիւնից չէ, այն ներդաշնակ չէ տնտեսութեան ընդհանուր վիճակին: Այդպէս են գոյանում այսպէս ասած անօդ տարածութիւնները, այսինքն՝ առաջատարում տնտեսական փուչիկները: Առաւել եւս, որ կապիտալ շինարարութեան ու տնտեսութեան իրական պատկերի միջեւ ներդաշնակութեան բացակայութեան ֆոնին, ձեւաւորուում են նաեւ վիճակագրական թռիչքներ ապահովող երկու

այլ գործօններ՝ ռեզիդենտների հոսքը եւ դէպի Ռուսաստան տարատեսակ ապրանքների վերաարտահանումը: Իսկ դրանք գործօններ են, որոնք գրեթէ ամբողջապէս դուրս են Հայաստանի տնտեսական քաղաքականութեան կառավարելիութեան շրջանակից: Աւելին, Հայաստանի տնտեսական քաղաքականութեան խնդիրը պէտք է լինի այդ գործօնների միջոցով տնտեսութիւն եկող ահռելի ռեսուրսների կառավարելիութիւնը, եւ դրանք Հայաստանի տնտեսութեանն իստիտուցիոնալ կերպով ներդաշնակեցնելու, համադրելի դարձնելու խնդիրները:

Առայժմ այդ խնդիրները բաց են, իսկ տնտեսական քաղաքականութեան պատասխանատուները եւ քաղաքական մեծամասնութիւնն ընդհանրապէս վայելում են ռեսուրսների յորդառատ տեղումների էֆեկտը: Մինչդեռ, այդօրինակ «վայելքների» մէջ գտնվող կառավարութիւնները միշտ կանգնում են մի ընտրութեան առաջ՝ մնալ բարձր աճի վայելքի մէջ՝ յոյսով, որ այն չի ընդհատուի, վատագոյն դէպքում կը նուազի փոքր ինչ, թէ՛ այդ բարձր աճի տեմպի վրայ իրականացնել խորը ռեֆորմացիա, քանի որ այդօրինակ ռեֆորմացիաները ունեն կոնկրետ ֆինանսատնտեսական զին: Պետութիւնների համար հենց բարձր աճի ժամանակաշրջանն է այդ տեսանկիւնից ամէնից յարմարը: Այդ շրջաններում է, որ ռեֆորմացիան լինում է նուազագոյն ցաւոտ, կամ ցաւոտ չի լինում ընդհանրապէս, այլ պարզապէս փոքր ինչ նուազեցնում է վիճակագրական ցուցանիշները:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

14 Քաղաքական Ուժեր Կը Մասնակցին Երեւանի Ընտրութիւններուն

Սեպտեմբեր 17-ին կայանալիք Երեւանի աւագանիի ընտրութիւններուն մասնակցելու յայտ ներկայացուցած են 14 քաղաքական ուժեր՝ 13 կուսակցութիւն եւ մէկ դաշինք:

Վերջին 20 տարուան ընթացքին առաջին անգամ քաղաքապետի ընտրութիւններուն չի մասնակցիր խորհրդարանական ընդդիմութիւնը: Ազգային ժողովի «Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւններու հիմնական ուժերը՝ Դաշնակցութիւնն ու Հանրապետականը:

Իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» առաջին թիւը փոխքաղաքապետ Տիգրան Աւինեանն է: Կուսակցութիւնը արդէն իսկ աշխոյժ քարոզչութիւն սկսած է:

2021-ին իշխող ուժին կողմէ պաշտօնանկ եղած Հայկ Մարութեանը հանրութեան անյայտ Ազգային Առաջընթաց կուսակցութեան առաջին թիւն է: Շուրջ 5 տարի առաջ հիմնադրուած կուսակցութիւնը ընտրութիւններու հարուստ փորձ չունի, մինչեւ այս միայն մէկ մեծ ընտրութիւններու մասնակցած են՝ 2018-ի արտահերթ խորհրդարանականին՝ հաւաքելով ձայներու 0,33 տոկոսը:

Քաղաքապետ կ'ուզէ դառնալ նաեւ Ազգային ժողովի ընդդիմադիր «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Անդրանիկ Թեւանեանը, որ օրերս յայտնեց, թէ կը հրաժարի պատգամաւորի մաստաթէն: Ան կը գլխաւորէ ընտրութիւններուն ընդառաջ հիմնուած «Մայր Հայաստան» դաշինքը:

Թիւններուն ընդառաջ հիմնուած «Մայր Հայաստան» դաշինքը:

«Ապրելու Երկիր» քաղաքապետի թեկնածուն կուսակցութեան նախագահ Մանէ Թանդիլեանն է: 45-ամեայ քաղաքական գործիչը երկու անգամ պատգամաւոր ընտրուած է, շուրջ կէս տարի ալ Նիկոլ Փաշինեանի կառավարութեան մէջ զբաղեցուցած է աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարի պաշտօնը: 00

Երեւանի աւագանիի ընտրութիւններուն մասնակցելու յայտ ներկայացուցած է նաեւ «Լուսաւոր Հայաստան»ը, որուն առաջին թիւը աւագանիի անդամ Դաւիթ Խաժակեանն է: 29-ամեայ քաղաքապետի թեկնածուն նոյնպէս աշխոյժ քարոզչութիւն կ'իրականացնէ, կը խօսի մայրաքաղաքի խնդիրներուն մասին:

«Հանրապետութեան» ցուցակն ալ կը գլխաւորէ արդարադատութեան նախկին նախարար, իրաւաբան Արտակ Զէյնալեանը, որ հայ գերիներուն շահերը կը ներկայացնէ Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանին մէջ:

ԿԼՑ փաստաթուղթեր ներկայացուցած են նաեւ «Միացեալ Հայաստան», «Հայաստանի Եւրոպական», «Ժողովրդավարական Համախմբում», «Յանուն Սոցիալական Արդարութեան», «Ուժը Հայրենեաց», «Յաղթանակ» «Հանրային Զայն» եւ «Արդար Հայաստան» կուսակցութիւնները:

Գագիկ Ծառուկեան Եւ Ընտանիքի Անդամները Հրաւիրուած Են Դատախազութիւն



Գագիկ Ծառուկեան ընտանիքի անդամներուն հետ

Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանը, անորա որդիները՝ Նուէր եւ Յովհաննէս Ծառուկեանները, կ'ինը՝ Ճաւահիր Ծառուկեանը, ծնողները՝ Ռոզա եւ Կոլիկ Ծառուկեաններուն հարսը հրաւիրուած են ՀՀ Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վարչութիւն:

Այս մասին տեղեկութիւն տարածած է պաշտօնական յայտարարութիւններու «Ազդարար» հարթակից:

Կը նշուի, որ վերջիններուս պատկանող գոյքին առնչութեամբ

իրականացուած է ուսումնասիրութիւն, որուն պատճառով կազմուած է ամփոփագիր:

Գագիկ Ծառուկեանին եւ կ'նոջ ուղարկուած ծանուցումներուն համաձայն՝ անոնց ներկայանալ անհրաժեշտ է 2023 թուականի Օգոստոս 21-ին՝ ժամը 11:00-ին, որդիներուն եւ հարսին՝ նոյն օրը՝ ժամը 11:30-ին եւ 12:00-ին, իսկ ծնողներուն՝ 12:30-ին:

Ծառուկեաններու ընտանիքը հրաւիրուած է Դատախազութիւն՝ ուսումնասիրութեան նիւթերուն ծանօթանալու եւ ամփոփագրին առնչութեամբ դիրքորոշում ներկայացնելու համար:

Երեւան-Կիւմրի ճանապարհին Ինքնաշարժի Արկածէն Զոհուած Է 11 Հոգի

Կիւմրի-Երեւան ճանապարհին՝ Լանջիկ գիւղի մօտակայքին իրար բախած են «Զիլ» մակնիշի բեռնատարն ու Volkswagen մարդատարը, ինչի հետեւանքով տեղույն վրայ մահացած են մարդատարի 11 ուղեւորները, անոնց շարքին՝ վարորդը: Եւս 6 մարդ ծանր ու ծայրայեղ ծանր վիճակի մէջ տեղափոխուած է «Կիւմրի» բժշկական կեդրոն: Անոնց բոլորին կեանքին վտանգ կը սպառնայ, «Ազատութեան» փոխանցեց հիւանդանոցի փոխնսօրէն Արմէն Խաչատրեանը:



Կիւմրի-Երեւան ճանապարհին իրար զարնուած մեքենաները

«Բոլորի վիճակներն էլ՝ ծանր եւ ծայրայեղ ծանր, որովհետեւ բազմակի վնասուածքներով են, բազմատեսակ վնասուածքներով են: Բոլորն ունեն նաեւ կեանքի խնդիր: Ամէն ինչ բուժանձնակազմը կատարում է, որպէսզի կարողանայ փրկել կեանքերը», ըսաւ Խաչատրեանը՝ մանրամասնելով. «Հիմնականում, կարելի է ասել, գանկ, դիմային գանկ, վերջուցներ՝ բազմաթիւ, բազմապիսի վնասուածքներով են եկել»:

Ըստ Քննչական կոմիտէին՝ պատահարի վայրին գննութեամբ պարզուած է, որ բախումը տեղի ունեցած է, երբ Volkswagen մակնիշի ինքնաշարժը գտնուած է իր


երթեկեկելի ուղեմասին մէջ՝ դէպի Երեւան ուղղութեամբ, իսկ «Զիլ»-ը՝ հանդիպակաց ուղեմասին մէջ՝ դէպի Կիւմրի ուղղութեամբ:

Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրատեանը որոշ մանրամասնութիւններ ներկայացուց, թէ ովքեր եղած են երկու ինքնաշարժներու ուղեւորները. «Նախնական տուեալներ կարող եմ ասել, որ «Համշեն Թուր»-ին պատկանող Mercedes Sprinter մակնիշի մեքենայ է եղել, բախուել է «Նոր Կեանք» գիւղի բնակիչ, «Զիլ»-ի վարորդ՝ մեր մարզի բնակիչ մեքենային, «Զիլ» մակնիշի մեքենայի վարորդը նոյնպէս պառկած է Կիւմրու բժշկական կեդրոնում: Այս պահին տարբեր նախաքննական եւ քննչական գործողութիւններ են իրականացուած դէպքի ամբողջութեամբ պարզաբանելու եւ ճշգրտելու ուղղութեամբ»:

«Հայաքուէ» Նախաձեռնութիւնը Կը Յայտնէ Թէ Հաւաքած Է 58 Հազար Ստորագրութիւն

Արցախը Ատրպէյճանի մաս ճանչնալը քրէականացնելու նպատակով «Հայաքուէ» նախաձեռնութիւնը հաւաքած է օրէնքով անհրաժեշտ 50 հազար ստորագրութիւններէն աւելի՝ 58.000, յառաջիկայ երկու շաբթուան ընթացքին արդիւնքները պիտի ամփոփուին եւ ներկայացուին Կեդրոնական Ընտրական Յանձնաժողով (ԿԼՑ): Անկէ յետոյ ԿԼՑ-ն մինչեւ մէկ ամիս ունի ստորագրութիւնները վաւերացնելու եւ Ազգային ժողով ուղարկելու համար, «Ազատութեան» հետ գրոյցին ըսաւ «Հայաքուէ»-ի նախաձեռնող խումբի անդամ Մենուա Սողոմոնեանը:

«Մեր հետագայ քայլերը տանելու են նրան, որպէսզի 58 հազար մարդու ստորագրած ցանկութիւնը օրէնքի տեսքով, այսինքն, Քրէական Օրէնսգրքում փոփոխութեան տեսքով մտնի Ազգային ժողովի նիստերի օրակարգ, եւ այնտեղ տեղի ունենայ քննարկում, եւ ի վերջոյ քուէարկութեամբ օրէնքի մէջ մտնի այդ փոփոխութիւնը, որ Հայաստանի Հանրապետութեան



անունից Արցախը որեւէ այլ պետութեան կազմում ճանաչելը լինի քրէօրէն պատժելի արարք», նշեց Սողոմոնեան:

«Հայաքուէ» նախաձեռնութիւնը կ'առաջարկէ երկու լրացում կատարել Քրէական Օրէնսգիրքին մէջ եւ 10-15 տարուան ազատագրման պատիժ սահմանել ոչ միայն Հայաստանի անունով Արցախը Ատրպէյճանի մաս ճանչնալու, այլեւ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտելու կամ անոր նշանակութիւնը նսեմացնելու համար:

2023թ. Յուլիսին 2022թ. Յուլիսի Համեմատութեամբ Երեւանի Մէջ Ծնած Է 2075 Երեխայ

«Երեւանում Յուլիս ամսին գրանցուել է 470 մահ, ծնուել է 2075 երեխայ՝ 1110 տղայ, 965 աղջիկ: Բնակչութեան մարդագրական թիւը Յուլիս ամսին կազմել է 1,4 տոկոս: 2023թ. վեց ամսուայ ընթացքում բնակչութեան մարդագրական ցուցանիշը դէպի դրական աճել է 1,6 տոկոսով:

«2023թ. Յուլիս ամսին 2022թ. Յուլիս ամսուայ համեմատութեամբ Երեւանում ծնուել է 124 երեխայ աւելի», Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական նիստի ժամանակ փոխքաղաքապետ Տիգրան Աւինեանին տեղեկացուց Երեւանի քաղաքապետարանի Առողջապահական վարչութեան պետ Դաւիթ Կարապետեանը:

ԼՈՒՐԵՐ

Միջազգային Ամենաբարձր Ատեանները Ամրագրեցին, Որ Ատրպեյճանը Պարտաւոր է Ապահովել Լաչինի Միջանցքին Անխափան Աշխատանքը. Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխավորութեամբ տեղի ունեցած է կառավարութեան հերթական նիստը: Նիստին սկիզբը վարչապետը անդրադարձաւ Ատրպեյճանի կողմէ ապօրինի կերպով Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամին, կոռուիւստի մէջ գտնուող մարդասիրական օգնութեան Լեռնային Ղարաբաղ տեղափոխելու արգելափակման, ինչպէս նաեւ Ատրպեյճանի կողմէ Արդարադատութեան Միջազգային Դատարանի պարտադիր իրաւական ուժ ունեցող որոշումներու չկատարման ու խաղաղութեան գործընթացի վիժեցման:

«Լեռնային Ղարաբաղում մարդասիրական ճգնաժամը շարունակում է խորանալ ու ծաւալուել: 2022 թուականի Դեկտեմբերից Ատրպեյճանը Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման միջոցով արգելել էր առեւտրային մատակարարումները դէպի Լեռնային Ղարաբաղ: Այսինքն՝ Լեռնային Ղարաբաղում գործող խանութները, դեղատները 2022 թուականի Դեկտեմբերից իրենց վաճառքի տեսականուարտութիւն մատակարարում ընդհանրապէս չեն ունեցել:

«Սոյն թուականի Յունիսի 15-ից Ատրպեյճանն արգելափակել է նաեւ դէպի Լեռնային Ղարաբաղ մարդասիրական բեռները, այդ թւում՝ մանկական սննդի եւ դեղորայքի մատակարարումները այդ թւում՝ կարմիր խաչի միջազգային կազմակերպութեան միջոցով:

«Կարծում եմ, որ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում յառաջացած մարդասիրական ճգնաժամը ծաւալուել է

այն աստիճանի, որ պէտք է աւելի մեծ ջանքեր գործադրել ստեղծուած իրավիճակին միջազգային իրաւական գնահատական տալու ուղղութեամբ՝ մանաւանդ, որ Ատրպեյճանը շարունակում է չկատարել Արդարադատութեան Միջազգային Դատարանի սոյն թուականի Փետրուարի 22-ի եւ Յունիսի 6-ի պարտադիր իրաւական ուժ ունեցող որոշումները Լաչինի միջանցքով մարդկանց, բեռների, փոխադրամիջոցների անարգել տեղաշարժի ապահովելու մասին:

«Ուշադրութեան արժանի է այն փաստը, որ միջազգային ամենաբարձր ատեանները վերջին շրջանի իրենց յայտարարութիւններով ամրագրեցին, որ Արդարադատութեան Միջազգային Դատարանի Փետրուարի 22-ի եւ Յունիսի 6-ի որոշումներին Ատրպեյճանի տուած մեկնաբանութիւնները որեւէ կապ չունեն իրաւականութեան հետ եւ որ Ատրպեյճանը պարտաւոր է ապահովել Լաչինի միջանցքի անխափան աշխատանքը:

«Առաւել եւս այս պայմաններում պիտի արձանագրեմ, որ ստեղծուած իրավիճակի լաւագոյն լուծումը Ատրպեյճանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման վերացումն է, Ստեփանակերտ-Պաքո երկխօսութեան մեկնարկը միջազգային մեխանիզմի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետութիւնն իր հերթին շարունակում է վերահաստատել իր հաւատարմութիւնը խաղաղութեան օրակարգին եւ պաշտօնական Պաքո-ուին կոչ է անում ձեռնպահ մնալ խաղաղութիւն հաստատելու պատմական հնարաւորութիւնը գրոյացնելուն ուղղուած քայլերից», իր խօսքին մէջ ըսաւ վարչապետ Փաշինեան:

Պաքուն Կը Պնդէ՝ «Հայաստանը Զէ Դադրեցուցած Իր Տարածքային Պահանջները Ատրպեյճանի Նկատմամբ»

«Ատրպեյճանը իրեն իրաւունք կը վերապահէ պաշտպանելու իր ինքնիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը», յայտարարած է Ատրպեյճանի Արտաքին Գործերու Նախարարութիւնը:

«Հայաստանը չէ դադրեցուցած իր տարածքային պահանջները Ատրպեյճանի նկատմամբ, եւ Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան բանաւոր ճանաչումը կը տարբերի անոր գործողութիւններէն», կ'ըսուի յայտարարութեան մէջ:

«2020 թուականին տեղի ունեցած պատերազմէն յետոյ Ատրպեյճանը Հայաստանին առաջարկած է խաղաղութիւն՝ հիմնուած երկու երկիրներու կողմէ միմեանց ինքնիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ սահմաններու անձեռնմխելիութիւնը փոխադարձ ճանչնալու եւ յարգելու վրայ՝ օրինական շահերու հաւասար եւ փոխադարձ յարգանքի հիման վրայ: Միւս կողմէ, Ատրպեյճանը կը վարէ հայկական ծագումով Ղարաբաղի բնակիչներու վերահամարկման քաղաքականութիւն՝ որպէս իրաւահարկաւոր քաղաքացիներ՝ ապահովելով Ատրպեյճանի Մահմանադրութեամբ եւ մարդու իրաւունքներու բոլոր համապատասխան միջազգային մեխանիզմներով նախատեսուած իրաւունքներն ու ազատութիւնները, որոնց Ատրպեյճանը կը մասնակցի: Միեւնոյն ժամանակ, դրսեւորելով հաւատարմութիւն այս բոլոր ոլորտներուն, Ատրպեյճանը իրեն իրաւունք կը վերապահէ պաշտպանել իր ինքնիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը ՄԱԿ-ի կանոնադրութեամբ եւ միջազգային իրաւունքի այլ համընդհանուր փաստաթուղթերով նախատեսուած բոլոր օրինական միջոցներով», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Պաքուն յայտարարած է, թէ «Ատրպեյճանի տարածքին ապօրինաբար տեղակայուած Հայաստանի զինուած ուժերը» վերջին շաբաթներուն ուժեղացուցած են ռազմաճարտարապետական աշխատանքները եւ այլ ռազմական գործունէութիւնը, ինչ որ «միջազգային իրաւունքի լուրջ խախտում է, ինչպէս նաեւ Հայաստանի պարտաւորութիւնները»: Աղբիւր՝ azatutyun.am

ԵՄ Ղիտորդական Առաքելութիւնը Հաստատեց Կրակոցներու Թիրախ Դառնալու Մասին Լուրը



ԵՄ Ղիտորդական առաքելութեան ղիտորդները Հայաստան-Ատրպեյճան սահմանին

Եւրոմիութեան (ԵՄ) ղիտորդական առաքելութիւնը նախ հերքեց, ապա հաստատեց Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան հաղորդագրութիւնը ղիտորդներու ուղղութեամբ ատրպեյճանական կողմի բացած կրակոցներուն մասին:

«Մենք կը հաստատենք, որ ԵՄ ղիտորդական առաքելութեան պարեկը ներկայ գտնուած է մեր պատասխանատուութեան գօտիին մէջ տեղի ունեցած կրակոցներուն», յայտնած է առաքելութիւնը ընկերային ցանցով՝ հեռուացնելով աւելի վաղ կատարած հերքումը:

Հայաստանի ռազմական գերատեսչութիւնը հաղորդած էր, որ այսօր կէսօրը անց Ատրպեյճանի զինուոր հրաձգային գէնքէն կրակ բացած է վերին Շորթալի ուղղութեամբ պարեկութիւն իրականաց-

նող եւրոպացի ղիտորդներուն եւ անոնց պատկանող ինքնաշարժիչ ուղղութեամբ:

Աւելի վաղ ԵՄ ղիտորդական առաքելութիւնը կեղծ անուանած էր այս լուրը:

Պաքուն կը հերքէ լուրը: «Եւրոմիութեան ղիտորդները նախապէս կը տեղեկացնեն ատրպեյճանական կողմին իրենց տեղաշարժի երթուղին, ինչպէս նաեւ ինքնաշարժներու համարանիշներն ու տեսակները: Ատրպեյճանական բանակի ստորաբաժանումները տեղեկացուած են առաքելութեան այցներու մասին, այդ իսկ պատճառով միջադէպը, որուն մասին կը հաղորդէ Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը, տեսականօրէն եւ գործնականին մէջ հնարաւոր չէ», յայտարարած է Ատրպեյճանի Պաշտպանութեան Նախարարութիւնը:

Լաւրովը Լաչինի Բացման Տարբերակ Առաջարկած Է, Որուն Ի Սկզբանէ Համաձայնած Են ԵՄ Պաքուն, ԵՄ ԼՂ-ն. «Քոմերսանթ»

Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերգէյ Լաւրով տարբերակ առաջարկած է, որուն ի սկզբանէ համաձայնած են թէ՛ ատրպեյճանական կողմը, թէ՛ ղարաբաղեան:

Անոր հուշիւնը այն էր, որ Աղտամով ճանապարհը բացուէր, ԿԽՄԿ-ի միջոցով սկսէր ամէն ինչի առաքումը: Իսկ այս վայրին մէջ երթեկեկութեան մեկնարկէն ուղիղ մէկ օր անց, Մոսկուայի առաջարկով, պիտի վերականգնուէր նաեւ Լաչինի միջանցքին երթեկեկութիւնը:

Այս մասին «Քոմերսանթ»-ին յայտնած է Ռուսիոյ բարձրաստիճան աղբիւրը՝ նշելով, որ այս տարբերակը բարձր մակարդակով

պատրաստուածութեան մէջ եղած է:

Բայց, ըստ անոր, Ստեփանակերտը այնուհետ պայման յառաջ քաշած է, որ Լաչինը բացուի ոչ թէ 24 ժամուան մէջ, այլ՝ անմիջապէս, յետոյ ԼՂՀ-ն յայտարարած է, որ ատրպեյճանական ծագման ապրանքները պէտք չէ առաքուին Աղտամով, այնուհետեւ տեղի ունեցեալ է վազիֆ խաչատրեանի հետ կապուած գայթակղութիւնը, որ ԼՂ իշխանութիւնները պահանջած են անյապաղ ազատ արձակել:

Ի վերջոյ, ըստ աղբիւրին, պայմանաւորուածութիւնները չեղարկուած են, փոխզիջում չէ եղած:

ՀՀ-ն Լեռնային Ղարաբաղի Սեջ Բանակ Չունի. ՊՆ

Ատրպեյճանի Արտաքին Գործերու Նախարարութեան տարածած հաղորդագրութիւնը այն մասին, թէ իբր ՀՀ Զինուած Ուժերը մեծ քանակութեամբ գէնք, ռազմական սարք եւ անձնակազմ կեդրոնացուցած է հայ-ատրպեյճանական սահմանին, չի համապատասխաներ իրականութեան, կը յայտնէ Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը:

Բացի անկէ, անդրադառնալով Ատրպեյճանի ԱԳՆ հաղորդագրութեան մէջ տեղ գտած մէկ այլ կեղծ պնդման, Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութիւնը եւս մէկ անգամ կը յայտարարէ, որ ՀՀ-ն Լեռնային Ղարաբաղի մէջ բանակ չունի:

Հաբաթներուն ուժեղացուցած են ռազմաճարտարապետական աշխատանքները եւ այլ ռազմական գործունէութիւնը, ինչ որ «միջազգային իրաւունքի լուրջ խախտում է, ինչպէս նաեւ Հայաստանի պարտաւորութիւնները»:

Աղբիւր՝ azatutyun.am

Ողջունելի է, Որ Միջազգային Առաջատար Լրատվամիջոցները Կը Շարունակեն Աշխուժօրէն Անդրադառնալ ԼՂ-ի Մէջ Ստեղծուած Իրավիճակին. ԼՂ Նախագահ

Արցախի Հանրապետութեան Նախագահ Արայիկ Յարութիւնեան ողջունած է, որ միջազգային առաջատար լրատվամիջոցները կը շարունակեն աշխուժօրէն անդրադառնալ լրակատար պաշարման հետեւանքով Արցախի մէջ ստեղծուած իրավիճակին:

«Միջազգային ԶԼՄ-ները իրենց նիւթերում արծարծում են ինչպէս Միջազգային Քրէական Դատարանի առաջին գլխաւոր դատախազ Լուիս Մորենօ Օքամփոյի գեկոյցը եւ գնահատականները, վաղը կայանալիք՝ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդում այս իրավիճակի քննարկումը, այնպէս էլ ներկայացնում են Արցախի իշխանութիւնների եւ հանրութեան կողմից տրուած փաստերն ու տեսակէտերը:

«Այսօր հեղինակաւոր «Financial Times» լրատուականը եւս անդրադարձել է պաշարուած Արցախի 120,000 բնակչութեան խնդիրներին, ինչպէս նաեւ իրավիճակի հնարաւոր զարգացումներին:

«Իմ խօսքերից լրատուամիջոցը մէջբերել է մի հատուած. «չըջափակումը յանգեցրել է անդի պակասի, քանի որ անդամները 90 տոկոսը սովորաբար ներմուծում էր Հայաստանից: Վառելիքի մեծածաւալ պակաս կայ: Առողջապահութիւնը եւ այլ անհրաժեշտ ծառայութիւնները մեծ դժուարութեամբ են աշխատում: Դեղորայքը սպառուել է՝ վտանգի տակ դնելով մարդկանց կեանքը»:



Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեան

«Անդրադառնալով Հայաստանի կողմից Արցախն Ատրպէյճանի կազմում ճանաչելու վերաբերեալ յայտարարութիւններին՝ նիւթում ներկայացուել է իմ կողմէ ՀՀ իշխանութիւններին՝ չգնալ այդ քայլին՝ ընդգծելով մեր ինքնորոշման իրաւունքը:

«Մենք, մեր գործընկերներն ու բարեկամները շարունակում ենք հետեւողական ջանքերը՝ բարձրացնելու իրավիճակի վերաբերեալ միջազգային հանրութեան իրազեկուածութեան մակարդակը եւ ճնշումն Ատրպէյճանի հանդէպ՝ ցեղասպանութեան հետագայ ընթացքի կանցման նպատակով», ըսած է Արայիկ Յարութիւնեան:

Պարուի Մէջ Սպանիոյ Գործերու Ժամանակաւոր Հաւատարմատարը Կանչուած է ԱԳՆ

Ատրպէյճանի իշխանութիւնները Արտաքին Գործերու Նախարարութիւն հրաւիրած են Սպանիոյ գործերի ժամանակաւոր հաւատարմատարը՝ արցախցիներուն օգնութիւն տրամադրելու Մատրիտի որոշման առնչութեամբ:

Ատրպէյճանական կողմի հաղորդագրութեան համաձայն՝ սպանացի դիւանագէտ Փաթրիսիա Սերանօ Սանչեսի հետ հանդիպման ընթացքին ատրպէյճանական կողմը կրկնած է՝ «Սպանիոյ քայլը սաղորիչ է»:

Նախօրէին Ռուսիոյ մէջ Սպանիոյ դեսպանատունը X-ի (Թուրիթրի) իր էջով տեղեկացուցած է, որ Սպանիայի Միջազգային Զարգացման Համագործակցութեան կազմակերպութիւնը որոշած է աջակցիլ Արցախէն Հայաստան տեղահանուած հազար մարդու՝ «Մենք՝ յանուն սովի դէմ պայքարի» մարդասիրական շարժումի ծիրին մէջ:

Ատրպէյճանի Արտաքին Գործերու Նախարարութեան խօսնակ Ալխան Հաճիգատէն պատասխան



գրաւմամբ «անընդունելի» որակած է Սպանիոյ աջակցութիւնը եւ պնդած, որ Ատրպէյճանը «խստօրէն կը դատապարտէ այդ ոչ-կառուցողական մօտեցումը»: Ատրպէյճանի իշխանութիւնները նոյնը կրկնած են նաեւ սպանացի դիւանագէտին հետ հանդիպման ընթացքին:

«Այդ ապակառուցողական մօտեցումը չի համապատասխաներ ատրպէյճանա-սպանական յարաբերութիւններու ոգիին եւ ատրպէյճանական կողմը խստօրէն կը դատապարտէ գայն», կ'ըսուի Ատրպէյճանի ԱԳՆ-ի Մամլոյ Ծառայութեան հաղորդագրութեան մէջ:

ԱՄՆ Ծերակուտական Ռոպըրթ Մենենտեսի Յանձնարարութեամբ Հայաստան Ժամանած Պատուիրակութիւնը Այցելած է Լաչինի Միջանցքի Սկզբնամաս

ԱՄՆ-ի Ծերակուտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ Ռոպըրթ Մենենտեսի յանձնարարութեամբ Հայաստան ժամանած է Յանձնաժողովի աշխատակազմի ներկայացուցիչներ Սառա Արքինի եւ Տեմիան Մերֆիի ղեկավարած պատուիրակութիւնը:

Ինչպէս յայտնած են Սիւնիքի մարզպետի աշխատակազմէն, Օգոստոս 7-ին անոնք հանդիպում ունեցած են Սիւնիքի մարզպետ Ռոպըրթ Ղուկասեանի ու Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանեանի հետ, որուն ընթացքին տեղեկացուցած են Սիւնիքի սահմաններուն տիրող իրավիճակին, ՀՀ ինքնիշխան տարածքին հանդէպ Ատրպէյճանի ոտնձգութիւններուն ու Արցախի շրջափակման եւ անոր հետեւանքներով յառաջացած մարդասիրական աղէտին մասին:

Օգոստոս 7-ին պատուիրակութիւնը Սիւնիքի մարզպետին ուղեկցութեամբ այցելած է Տեղ համայնքի Կոռնիձոր գիւղ, ուր

Ռոպըրթ Ղուկասեանը անոնց ներկայացուցած է Լաչինի միջանցքին փակ ըլլալու փաստն ու երկկողմ երթեկուտի բացակայութիւնը:

ԱՄՆ Ծերակուտի ներկայացուցիչները դիտարկած են նաեւ հանգամանքը, որ ՀՀ կառավարութեան ուղարկած մարդասիրական բեռով ինքնաշարժները արդէն օրեր շարունակ կանգնած են սահմանէն այսկողմ ու չեն կրնար հասնիլ անոնց կարիքը ունեցող Արցախի բնակիչներուն:

Ատրպէյճանը կը շարունակէ ամբողջութեամբ արգելափակուած պահել Լաչինի միջանցքը, ինչի հետեւանքով Արցախի մէջ մարդասիրական իրավիճակը երթալով աւելի կը վատթարանայ: Արցախի բնակչութիւնը գրկուած է պարէնի, դեղորայքի, վառելանիւթի մատակարարումներէն: Ատրպէյճանը արգելափակած է նաեւ Արցախի կազմատակարարումն ու ելեկտրամատակարարումը:

Այս Տարուայ Առաջին Եօթը Ամիսներուն Հայաստան Այցելած է 1,26 Միլիոն Զբօսաշրջիկ



Հայաստանը գրեթէ միշտ եղած է որպէս հետաքրքրական ու առանձնայատուկ զբօսաշրջային ուղղութիւն՝ այցելուներուն առաջարկելով երկրին հիւրընկալութիւնը, խոր արմատներ ունեցող պատմութիւնը, համեղ խոհանոցը, հիասքանչ տեսարաններն ու պատմաշակութային կոթողները, արկածային եւ ուտեստային պտոյտները:

Ըստ ՀՀ Զբօսաշրջութեան Կոմիտէին, 2023 թուականի Յուլիսին Հայաստան այցելած է շուրջ 256 հազար զբօսաշրջիկ, ինչ որ լաւագոյն վիճակագրական տուեալն է նախորդ տարիներու նոյն ժամանակահատուածին համեմատ: 2022 թուականի Յուլիսին Հայաստան այցելած է շուրջ 189 հազար զբօսաշրջիկ, իսկ 2019 թուականի նոյն ժամանակահատուածին՝ 202 հազար:

ՀՀ Զբօսաշրջութեան Կոմիտէին տուեալներով՝ զբօսաշրջային այցելութիւններուն թիւը 2023 թուականի Յունուարէն Յուլիս ինկած ժամանակահատուածին կազմած է 1,26 միլիոն, որ 29%-ով աւելի է 2019 թուականի նոյն ժամանակահատուածի

թիւերէն: ՀՀ Զբօսաշրջութեան Կոմիտէի լրատուութեան եւ հասարակութեան հետ կապերու պատասխանատու Աննա Մարգարեանը նշեց, որ Հայաստան այցելող զբօսաշրջիկներու թիւերով առաջատար երկիրներն են Ռուսաստանը, Վրաստանը եւ Իրանը:

Ան ընդգծեց, որ Զբօսաշրջութեան Կոմիտէն կ'իրականացնէ հնարաւոր ամէն բան՝ Հայաստանի զբօսաշրջային հնարաւորութիւնները բացայայտելու ուղղութեամբ:

«Մենք շատ աշխույժ մասնակցում ենք միջազգային զբօսաշրջային միջոցառումներին, ցուցահանդէսներին, որտեղ ներկայացնում ենք Հայաստանը որպէս գրաւիչ զբօսաշրջային ուղղութիւն՝ Հայաստանի զբօսաշրջային արտադրութիւնը, ներուժը: Ինչպէս նաեւ փոխանցում ենք հայաստանեան զբօսաշրջային ընկերութիւնների տուեալները տեղի զբօսաշրջական ընկերութիւններին, որպէսզի կարողանան հետագայում զարգացնել երկկողմանի համագործակցութիւնը զբօսաշրջութեան ոլորտում», ըսաւ ան:

Թուրքիոյ Սէջ Հայ-Թրքական Սահմանը Բանալու Հետ Կապուած Մաքսատան Վերանորոգման Աշխատանքներ Կ'իրականացուին. «Ալյու» Թերթի Խմբագիր



Թուրքիոյ մէջ հայ-թրքական սահմանը բանալու հետ կապուած մաքսատան վերանորոգման աշխատանքներ կ'իրականացուին, բայց ի տարբերութիւն Հայաստանի՝ այդ տեղեկութիւնները թրքական մամուլին մէջ լայն տարածում չեն գտներ: Այս մասին «Civic.am»-ի հետ զրոյցին ըստ Թուրքիոյ մէջ հրատարակուող «Ալյու» թերթի խմբագիր Բագրատ Էսդուքեանը:

Հարցումին՝ Ձեր կարծիքով՝ Թուրքիան ե՞րբ պատրաստ պիտի ըլլայ բանալու սահմանը Հայաստանի հետ, մեր զրուցակիցը արձագանգեց, որ Թուրքիան, ինչպէս եւ Ատրպէյճանը 44-օրեայ պատերազմէն յետոյ առաւելապաշտ քաղաքականութիւն կ'իրականացնեն Հայաստանի դէմ, եւ առաւելապաշտութիւնը կը դրսեւորուի «Ձանգեզուրի միջանցք» արտայայտութեամբ, որ կը փափաքին ստանալ Հայաստանէն:

Բագրատ Էսդուքեանը ընդգծեց, որ Թուրքիան կ'ակնկալէ ստանալ «Ձանգեզուրի միջանցք», որ չի վերահսկուի Հայաստանի կողմէ, ըլլալ Հայաստանի իշխանութիւնէն պոկուած տարածք, որ կապէ Ատրպէյճանը Նախիջեւանին ու Թուրքիոյ: Մեր զրուցակիցը նշեց, որ Հայաստան-Ատրպէյճան խաղաղութեան պայմանագրի կնքման ու Թուրքիա-Հայաստան յարաբերութիւններու կարգաւորման գուգահեռ երկու երկիրները մտադիր են բանակցային սեղանին դնելու նաեւ «Ձանգեզուրի միջանցքի» հարցը. «Հայաստանի իշխանութիւնէն պոկ-

ուած հողային տարածք մը կ'ուզեն, որ Թուրքիան պիտի կապէ Ատրպէյճանին: Այդ է, որ Հայաստանին համար անընդունելի է: Ապա թէ ոչ՝ ճանապարհի համար ինդիք չկայ, ճանապարհը ուր որ աւելի ձեռնտու է, այնտեղ ալ կը բացուի, բայց իրենց ուզածը հսկողութեան դուրս մնալն է, ինչ որ սպառնալիք մըն է Հայաստանի հողային ամբողջութեան՝ պետականութեան դէմ»:

Ինչ կը վերաբերի Հայոց Յեղասպանութեան հարցին՝ Բագրատ Էսդուքեանը նշեց, որ քանի որ Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցով բանաձեւեր կը պատրաստէ Սփիւռքը, հետեւեալը Թուրքիան այդ մասով որեւէ պահանջ չունի Հայաստանի կառավարութեանէն. «Հայաստանը այդ գործի մէջ ուղղակի դերակատարութիւն չունի որպէս պետականութիւն, եւ Թուրքիան չի կրնար ակնկալիք ունենալ: Յեղասպանութիւնը փաստացի իրողութիւն մըն է, Թուրքիան ի՞նչ կրնայ պահանջել Հայաստանէն այդ ուղղութեամբ»:

Խօսելով Թուրքիոյ վերընտրուած նախագահ էրտողանի քաղաքականութենէն՝ մեր զրուցակիցը շեշտեց, որ թէպէտ իր ելույթներուն մէջ իր համակիրները ոգեւորելու համար էրտողանը կրնայ Արեւմուտքի դէմ խօսիլ, բայց իրականութեամբ մէջ Թուրքիան Արեւմուտքին ենթակայ երկիր է՝ որպէս ՆԱՌՕ-ի անդամ պետութիւն:

Միջազգային Հանրութիւնը Չի Կրնար Շարունակել Հայեացքը Թեքել, Երբ ԼՂ-ի Սէջ Մարդիկ Սովամահ Կ'ըլլան. Իրաւապաշտպան Էվելինա Օչապի Յօդուածը՝ «Forbes»-ի Սէջ

Իրաւապաշտպան Էվելինա Օչապը, որուն գործունէութեան հիմնական ուղղութիւններէն է աշխարհի տարբեր երկիրներու մէջ ազգային փոքրամասնութիւններուն նկատմամբ հետապնդումները, «Forbes»-ի մէջ յօդուած հրատարակած է՝ անդրադառնալով Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Արցախի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամին:

Իր յօդուածին մէջ, իրաւապաշտպանը մէջբերած է ՄԱԿ-ի փորձագէտներու՝ Օգոստոս 7-ի յայտարարութիւնը այն մասին, որ Ատրպէյճանի կողմէ շրջափակման հետեւանքով վերջին եօթը ամիսներու ընթացքին արգելափակուած կը մնայ Լեռնային Ղա-

րաբաղը Հայաստանին կապող միակ ճանապարհը, ինչի հետեւանքով բնակչութիւնը բախած է սննդամթերքի, պարէնի, բժշկական եւ առողջապահական մաքրութեան պարագաներու կտրուկ պակասի հետ:

Օչապ իր յօդուածին մէջ չի շեշտուած է Լաչինի միջանցքով մարդոց եւ փոխադրամիջոցներու տեղաշարժը ապահովելու վերաբերեալ Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարանին եւ Արդարադատութեան Միջազգային Դատարանին որոշումները՝ արձանագրելով, որ Ատրպէյճանը չէ կատարած որոշումները, քանի որ Լաչինի միջանցքը կը շարունակէ արգելափակուած մնալ:

Իրաւապաշտպանը նաեւ անդ-

Պահի Հրամայականն Է Սթափիլ

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Երբ կը հետեւինք համաշխարհային զարգացումներուն յաճախ կը տարուինք մտածելու թէ ե՞րբ պիտի հասնի սթափելու պահը: Համաշխարհային մարդկութիւնը պատմութեան բոլոր ժամանակներէն աւելի ծանր փորձութիւններով կը ցնցուի վերջին հարիւր տարիներու ընթացքին: Պատմաբաններու վկայութեամբ գիտենք թէ մարդկութեան աւելի քան 10 հազար տարիներու ընթացքին միայն 350 տարի նշուած է խաղաղութեան մէջ անցած: Այդ պատերազմներու ամենակործանիչը, ամենաշատ կեանքեր խլողը, քաղաքներ փլոյզը պատահեցան այս վերջին տարիներու ընթացքին: Տակաւին քանի մը օր առաջ, Օգոստոսի վերջին նշեցինք Հիւրոշիմայի հիւլէական զէնքով փլուզման տարեդարձը: Քանի մը օր վերջ նոյն տեսակի ուռմըը այս անգամ խորտակած էր Նակազաքի քաղաքը: Այդպէսով աւարտած համարուեցաւ Բ. համաշխարհային պատերազմ կոչուած աղէտը:

Յետ պատերազմեան շրջանի ամենայայտնի կարգախօսն էր. «Անգամ մըն ալ երբեք»: Չարմանալի միամտութիւն: Մեծ յոյսերով այդ կարգախօսը արտասանողները միամիտօրէն անտեսեցին դրամապաշտ քաղաքականութեան բնագոյրը: Չի կրնայ գիտակցութեան բերել թէ այդ բոլորը համաշխարհայնացած դրամապաշտութեան պահանջած անհրաժեշտութիւնն է:

Պատերազմ հրահրողները լաւագոյնս շահագործեցին իրենց գաղափարախօսութեամբ մարմնաւորուած ազգայնականութիւնը: Անգամ մը օր այդ թունաւոր, իր մէջ ատելութեան թոյնը պարունակող ազգայնականութիւնը կամ աւելի մեղմ բառով ազգասէրութիւնը, որ մտնէ մարդկանց մտքերուն այլեւս շատ հեշտ է ատելութիւն սերմանել եւ ցանկացած պահուն ալ, ցանկացած երկրէ ներս նոր պատերազմի մը կայծը արձակել:

ըրադարձած է Միջազգային Քրէական Դատարանի նախկին դատախազ Լուիս Օքամպոյի գեկոյցին, որուն մէջ վերջինս արձանագրած է, որ Ատրպէյճանը ցեղասպանութիւն կ'իրականացնէ Լեռնային Ղարաբաղի մէջ:

«Լեռնային Ղարաբաղի մէջ ծանր վիճակի մասին հաղորդարուցութիւնները վերջապէս պէտք է լուրջ ընդունուին եւ գործողու-

Տակաւին երէկ էր դարձեալ, երբ Ռուսիոյ Դաշնութեան նախագահը կը սպառնար հիւլէական զէնք գործածելով, եթէ Ուկրաինական բանակը հակադարձակումով մը թիրախաւորէ Ռուսաստանի տարածքը:

Մենք ալ նոյն միամտութեամբ պիտի շարունակենք յուսալ թէ այդ սպառնալիքին դէմ բողոքի ամենաբարձր ձայնը բարձրանայ, նոյն ինքն Ռուսաստանէն:

Իսկապէս յիմարութեան աստիճանի միամտութիւն մըն է այս, քանի որ Ռուսիոյ հասարակութիւնը ինչպէս բոլոր երկիրներու՝ վաղուց մոռացած է պատերազմի սարսափը:

Նոյնիսկ չափազանցած չենք ըլլար, եթէ ըսենք որ համաշխարհային հասարակութիւնը այս բոլորը կը դիտէ ֆուլպոլային մրցումի մը համազօր հետաքրքրութեամբ:

Արցախի մէջ 120 հազար հայեր օրհասական դրութեան մէջ են: Արցախի Յարութիւնեանի սրտցաւ աղաղակները չեն լսուիր ամենամօտ երկիրներէն իսկ: Մեր էջերուն վրայ տեղ տուինք Անվիական կառավարութեան գաղթականներու ներխուժումը կանխելու համար դիմած անարդկային միջոցներուն:

Յարատեւ եւ յաճախակի բնոյթ ստացած են Միջերկրականի ալիքներուն մէջ անդենական գացող գաղթականներու լուրերը:

Գիտութեան մեծ ուսումնորով զարգացած այս դարուն մարդիկ կ'ապրին եւ կը գործեն ամենանախնական դրողումներով:

Ելքի միջոցը պարզ է՝ համաշխարհային ապստամբութիւն բռն մը դրամատոէրերու դիմաց: Ինչպէս լոր կ'ըսուէր «Արշալիր Ուոլ Սթրիթը» ցոյցերու ժամանակ, լիչենք որ մենք՝ տուժողներս 99 տոկոս ենք:

Գիտեմ որ այս ալ միամտութիւն պիտի թուի, բայց ուրիշ ելքի միջոց մըն ալ գոյութիւն չունի:

Պահի ոչ թէ թելադրանքը, այլ անյետաձգելի հրամայականն է սթափիլ այս թմրութենէն:

Թիւններ ձեռնարկուեն: Քանի որ Լեռնային Ղարաբաղի մէջ մարդիկ սովամահ կ'ըլլան, միջազգային հանրութիւնը չի կրնար շարունակել հայեացքը թեքել, ինչպէս եղած է վերջին 8 ամիսներու ընթացքին: Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը հրատապ օգնութեան կարիք ունի՝ առանց յաւելեալ արդարացումներու», գրած է էվելինա Օչապը:

Այժմ Առաջնահերթ Խնդիրն Է

Շարունակուած էջ 1-էն

առաջնահերթ խնդիրն է դադրեցնել, Յեղասպանութեան յանցագործութեան նախագործացման եւ անոր համար պատիժի մասին ուխտի Բ. յօդուածին համաձայն, արդէն իսկ իրականացուած ցեղասպանութիւնը՝ Լաչինի միջանցքը ապաշրջափակելու եւ սպանութիւններու միջոցով նոր ցեղասպանութիւնը կանխելու ճանապարհով»:

Աւելի վաղ Օքամպոյի հրատարակած էր իր եզրակացութիւնը՝ Լաչինի միջանցքին փակումը գնահատելով որպէս Լեռնային Ղարաբաղի հայերու ցեղասպանութիւն: Նոր գրառման մէջ ՄՔԴ նախ-

կին դատախազը չի շեցուցած է, որ Յեղասպանութեան մասին ուխտի մասնակից 153 պետութիւններ պարտաւորուած են կանխելու ցեղասպանութիւնը եւ պատժելու անոր համար: Այդ երկիրներու շարքին են այն պետութիւնները, որոնք կը հանդիսանան ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի մշտական անդամներ (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսա):

Այս ծիրին մէջ ան նշած է, որ Հայաստանը դիմած է ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին՝ Լեռնային Ղարաբաղի մէջ տիրող իրավիճակին վերաբերեալ արտակարգ նիստ կայացնելու խնդրանքով:

Ատամ Շիֆ Կոչ Կ'ընէ Նախագահ Պայտընին

Շարունակուած էջ 1-էն

Համապատասխան, գրած է Շիֆ: Հիմա Ատրպէյճանը թոյլ չի տար 400 թոն մարդասիրական օգնութեան բեռ մուտք գործել ԼՂ՝ ի հեճուելու միջազգային իրաւունքի եւ 2020 թուականի Նոյեմբեր 9-ի գինադադարի պայմանագրին:

Թէեւ ԱՄՆ-ը, Եւրոմիութիւնը, ՄԱԿ-ի փորձագէտները եւ Ռուսաստանը կոչ ըրած են ապաշրջափակելու Լաչինի միջանցքը եւ ապահովելու անով կանոնաւոր տեղաշարժը, Ատրպէյճանը կ'անտեսէ այդ կոչերը: Յայտարարութիւններուն ժամանակը անցած է վաղուց, ուստի, յաւելած է Շիֆը՝ նախագահին կոչ ընելով յստակ քայլերու:

Անոնցմէ առաջինը ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի արտակարգ նիստ հրահրելն է, քանի դեռ այն կը նախագահէ Միացեալ Նահանգները: Իրավիճակը Լեռնային Ղարաբաղի մէջ կը համապատասխանէ ԱՄՆ-ի մտադրութեան՝ գլխաւոր թեմա դարձնել պարէնային անվտանգութեան եւ մարդու իրաւունքներու համար պայքարը:

Երկրորդ՝ ամերիկեան առաքելութիւն ուղարկել ՄԱԿ՝ Անվտանգութեան Խորհուրդի բանաձեւ պատրաստելու համար, որուն մէջ կը խօսուի Լեռնային Ղարաբաղի մէջ ՄԱԿ-ի փորձագէտներ-

րու տեղակայման մասին՝ փաստեր հաւաքելու եւ տեղի ունեցողին անկախ գնահատական տալու համար, ինչպէս նաեւ Ատրպէյճանի դէմ պատժամիջոցներ կիրառելու հարցով:

Երրորդ՝ յանձնարարել ԱՄՆ Պաշտպանութեան Նախարարութեան եւ USAID-ին ուսումնասիրել ԼՂ ցամաքային կամ օդային ճանապարհով շտապ մարդասիրական օգնութիւն հասցնելու հնարաւորութիւնները:

Չորրորդ՝ Ալիեւի հետ կապ հաստատել ու գայն զգուշացնել շրջափակման հետեւանքներուն մասին՝ ներառեալ պատժամիջոցները, վիզայի չեղարկումը, ինչպէս նաեւ ԱՄՆ օգնութեան դադարեցումը (որ, շատ գոնկրէսականներու կարծիքով, վաղուց պէտք է դադարեցուած ըլլար), նշած է Շիֆը:

«Յեղասպանութեան ճանաչման մասին բանաձեւ ընդունելով՝ Միացեալ Նահանգները յայտարարած է «Այլեւս երբեք», բայց հիմա Ղարաբաղի ժողովուրդը կանգնած է ցեղային գտումներու իրական սպառնալիքի առջեւ: Պարոն նախագահ, դուք արդարադատութեան կողմնակից էիք, հանդէս եկաք ճշմարտութեան օգտին, այժմ եկած է ժամանակը այդ յայտարարութիւնները արտայայտելու գործով եւ կանխելու հանքերու նոր ցեղասպանութիւնը», գրած է գոնկրէսականը:

Երեւանի Սէջ Նշուեցաւ ՀՄՄ-ի 100-Ամեակը

Շարունակուած էջ 1-էն

Բաքան: Ապա, Նորա Փիլիպոսեան ընթերցեց Մեծն Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը Արամ Ա.-ի պատգամը:

Ելոյթ ունեցաւ ՀՀ Կրթութեան, Գիտութեան, Մշակույթի եւ Սպորթի փոխ-նախարար Կարէն Գիլոյեան:

Յուզադրուեցաւ յատուկ ժապաւէն՝ Միութեան տարիներու վրայ երկարող գործունէութեան մասին:

տէրեանին:

Կատարուեցաւ գեղարուեստական յայտագիր՝ մասնակցութեամբ մանկական «Պրինա» երգչախումբին:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ «Ուխտի Հրաւէր» երգով:

Յաջորդ օրը՝ Շաբաթ, 12-ին կայացաւ ՀՄՄ-ի 10-րդ համագումարը, որու աւարտին ընտրուեցաւ նոր կեդրոնական վարչութիւն՝ Միսակ Նաճարեան գլխաւորութեամբ:

Կ ի Ր ա կ ի ա ո ա լ օ տ ե ա ն



Ելոյթ ունեցաւ ՀՄՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Միսակ Նաճարեան: Ան իր խօսքի աւարտին յատուկ գնահատականներ յանձնեց ՀՄՄ-ի երկարամեայ նուիրեալ անդամներ՝ Մանօ Շիրտմեանին եւ Գալուստ Տէր-

ՀՄՄ-ականները այցելեցին «Եւաթլուր», ուր ծաղկէպսակ գտեղեցին նահատակ զինուորներու յուշարձանին առջեւ:

Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ ՀՄՄ-ի 100-ամեակին նուիրուած ճամկերոյթ-խրախմանը:

Նախագահ Պայտընէն Կ'ակնկալուի Աւելի Ազուր Բայլեր

Շարունակուած էջ 1-էն

Անշուշտ պէտք է թերագնահատել աւանդական կառուցներու կարեւորութիւնը: Յետեղեռնեան շրջանին, սփիւռքի կառուցները վճռորոշ դեր խաղացան հայկական ինքնութեան պահպանման մէջ՝ մշակուցի, լեզուի եւ այլ միջոցներով: Սակայն, ապագայի հեռանկարով՝ տասնամեակներ առաջ ստեղծուած այս կառուցները չեն համապատասխաներ 21-րդ դարու պահանջներուն: Այս պատճառով է որ ձեռով մը անոնք կամաց-կամաց կը կորսնցնեն իրենց գոյութեան իմաստը, կամ՝ մարդիկ կը հեռանան անոնցմէ: Այսօր իբրեւ կարեւոր նիւթ, սփիւռքեան օրակարգի վրայ կը գտնուի նոր կառուցներու ստեղծումը կամ եղածներուն էական վերափոխումը՝ նոր շունչով եւ ծրագրային նոր մտեցումներով: Սփիւռքի մէջ սկսած են ի յայտ գալ նոր կառուցներ ու կազմակերպութիւններ, ուր անհատներ ցանցեր (networks) կը կազմեն ու կ'աշխատին միասին: Սակայն, կարեւոր է անցումային կապի մը ստեղծումը արդէն գոյութիւն ունեցող եւ նոր ստեղծուող կառուցներուն միջեւ:

Սփիւռքը դէմ յանդիման կը գտնուի նաեւ ղեկավարութեան տագնապին: Վերը նշուած ուսումնասիրութիւններուն մէջ ի յայտ կու գայ, որ տեսիլք ունեցող ղեկավարներու պակաս կայ սփիւռքեան կեանքին մէջ: Իր կարգին, փափուկ ուժը, իր անհատական հունաւորումով հանդերձ, կը դիմադրաւէ գործնական դժուարութիւններ, ինչպէս հեռաւորութիւնները եւ ժամանակը, նաեւ՝ հասարակական յարափոփոխ կեանքը: Ժամանակի սղութիւնը եւ հսկայ տարածքներով սփռուած ըլլալու իրականութիւնը նկատի առնելով, մարդիկ առաջնահերթութիւն կու տան որակաւոր եւ ազդեցիկ աշխատանքներու, միջոցառումներու կամ ձեռնարկութիւններու, որ բնականաբար կ'ազդէ աւանդական կառուցներու հետ անոնց ներգրաւուածութեան վրայ: Տակաւին, համաշխարհային փոփոխութիւնները, ինչպէս արհեստագիտական յառաջդիմութիւնը եւ գլոբալիզացիան, մեծ ազդեցութիւն ունին սփիւռքեան կեանքին վրայ: Այս բոլորը ազդեցութիւն ունին եւ պէտք է հաշուի առնուին նոր կառուցներ ձեւաւորելու կամ գոյութիւն ունեցողները բարեփոխելու գործընթացին մէջ:

Կրնայ հարց տրուիլ, թէ այս փափուկ ուժը որքանով արդիւնաւէտ ու ազդու կրնայ ըլլալ, երբ օրինակ Հայաստան գիտնորական յարձակումի մը կամ պատերազմի վտանգին տակ գտնուի: Ինչպէ՞ս կարելի է սփիւռքի փափուկ ուժը արագօրէն գորաշարժի ենթարկել: Պէտք է ի մտի ունենալ, որ փափուկ ուժը վիճակ մը չէ, որ կարելի է անմիջապէս գորաշարժի ենթարկել ճգնաժամի մը ժամանակ: Փափուկ ուժը կը պայմանաւորէ նախօ-

Հին Մետաքսի ճանապարհի Հայկական «Վկաները» Ու Նորի Մշակութային Հեռանկարները



ԱՍՏՂԻԿ ՓԻԼՊՊՈՍԵԱՆ


2013 թվականից Չինաստանը նախաձեռնել է «Մէկ գոտի, մէկ ճանապարհ» գլոպալ առեւտրային ուղու ստեղծումը: Տնտեսական ամուր յարաբերութիւններ ձեւաւորելու գործում այդ երկիրը կարեւորում է մշակութային կապերի դերը: Երեւանում օրերս տեղի ունեցաւ հայ-չինական գիտաժողով-ցուցահանդէս՝ նուիրուած նախաձեռնութեան տասնամեակին:

Հին «Մետաքսի ճանապարհից» մինչեւ նոր «Մէկ գոտի, մէկ ճանապարհ», տարբեր աշխարհամասեր իրար կապող առեւտրային ուղու վերածնունդը 2013 թվականից Չինաստանի ժողովրդական Հանրապետութեան կարեւոր նպատակներից է:

Նախաձեռնութեան 10-ամեա-

Երկրաբան Արա Աւագեանն ուսումնասիրել է երկրաշարժի, հրաբխի կամ սողանքի պատճառով հողաշերտի տակ անցած «Մետաքսի ճանապարհի» հայկական տեղանքները: Դրանցից մէկը Վայոց Ձորի պատմական Մոզ քաղաքն է, որը տարանցիկ առեւտրի փառաբանուած կեդրոն է եղել:

«Մոզ քաղաքը աւիրուած է երկրաշարժից, որը տեղի է ունեցել 735 թվականին: Տարածքը ընդհանրապէս, բնակեցուած է շատ վաղուց: Բրոնզեդարեան թաղումներ կան շատ հետաքրքիր: Միջնադարեան շերտը շատ-շատ հարուստ է՝ աւերուած տներ, պարիսպներ, կառուցներ հոգեւոր, եկեղեցիների հիմքերը լաւ պահպանուած են, շատ բաներ կան այստեղ, որ կարիք ունի բարձրորման եւ իհարկէ պահպանման»:



կին Հայաստանի գիտութիւնների ազգային ակադեմիայի Երկրաբանական թանգարանը, Չինաստանի Ֆուծիանի թանգարանը եւ հայ-չինական գործընկերութեան կեդրոնը Երեւանում գիտաժողով-ցուցահանդէս էին կազմակերպել:

Մետաքսի ճանապարհը բաղկացած է եղել ուղիներից, որոնցից իւրաքանչիւրն ունեցել է իր ակտիւ սեգմենտը: Չմրանը քարաւաններն ինչպէ՞ս պէտք է անցնեն վարդենեաց լեռնանցքով, կամ ամրանը՝ Սիրիայի անապատներով. կլիմայից կախուած ամէն ուղի ունեցել է իր շահագործման շրջանը՝ մանրամասնում են գիտաժողովի մասնակիցները:

14-րդ դարում Օրբելեանների իջեւանատան կառուցումը, որը յայտնի է նաեւ Սելիմի քարաւանատուն անուամբ, իր շուրջը աշխոյժ առեւտրային գոտի է ձեւաւորել՝ ազդելով նաեւ ոչ շատ հեռու գտնուող Գնդեվանք վանական համալիրի կեանքի վրայ: Վանական տնտեսութեան զարգացումը զարկ է տուել ձեռագրերի ստեղծմանը: Հնագէտ Աւետիք Ղազարեանը պատմում է համալիրում յայտնաբերուած չինական Մին արքայատոհմի ժամանակաշրջանի բարձրակարգ ձեւապակէ սպասքի մասին. «Գանձերը թաքցուել են 18-րդ դարի երկրորդ կեսին, մինչեւ 1981 թվականին յայտնագործումը: Մէկ ափ-

սէ է, 4 բաժակ եւ բաժակատակ: Իրենք բաժակներ չեն, աւելի շատ փիւլա է՝ Չինաստանում դա խիստ տարածուած սպասքատեսակ է: Իր մեծագոյն նշանակութիւնն այն է, որ ձեռնապակուց է: Նրա վրայ զարդաքանդակները, գունաւորումը, պատրաստման եղանակը 14-րդ դարի է, եւ շուրջ 2 դար օգտագործումից յետոյ է, որ վանակները ի պահ են տուել հողին, որպէսզի յետոյ վերադառնան: Բայց գանձերը սպասել են մինչեւ 19-րդ դարի վերջեր՝ գտնուելու եւ այսօր ներկայացուելու»:

Հնագէտ Աստղիկ Բաբաջանեանը գբաղում է Արփա գիւղատեղիի պեղումներով: Գտնուելով ճանապարհների խաչմերուկում, տեղանքը 12-14-րդ դարերում իշխած Օրբելեանների վարչական նստավայրերից մէկն է եղել. «Պեղումների արդիւնքները ցոյց են տալիս, թէ ինչպէս են ճանապարհի հետագծին տեղակայուած բնակավայրերը ակտիւ մասնակցութիւն ունեցել Մետաքսի ճանապարհին, որոնց լաւ ապացուցները նրախական մշակույթի մէջ երեւում են ջնարակապատ խեցեղենում: Հենց Չինաստանից, իրանական, միջինասիական տարբեր խեցեգործական կեդրոններից ներմուծուած բաւական թանկարժէք եւ եզակի նմուշներ կան, որ ներկայացուած են Վայոց Ձորում»:

Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի գիտաշխատող Բորիս Գասպարեանը հին Մետաքսի ճանապարհին Վայոց Ձորի կարեւորութեան գաղտնիքը բացատրում է մոնղոլական տիրապետութեան ժամանակ Օրբելեան իշխանատոհմի՝ մոնղոլների հետ ունեցած յարաբերութիւններով, ինչը նրանց թոյլ է տուել ինտեգրուել միջազգային առեւտրի համակարգին. «Հայկական լեռնաշխարհն իր քաղաքակրթական ակունքներից ունէր, օրինակ, օբսիդիան, մետաղ, խաղող, եւ Հայաստանն այդ ընդհանուր համակարգի մէջ

իր բնաաշխարհագրական ռեսուրսներով ու հումքով պէտք է իր ուրոյն տեղն ունենար»:

Հայ-չինական գործընկերութեան կեդրոնի նախագահ Արմէն Մրիթարեանն ասում է՝ նոր «Մետաքսի ճանապարհը» հնի նմանութեամբ ոչ միայն տնտեսական, այլեւ մշակութային յարաբերութիւնների մասին է: Նախքան երեւանեան գիտաժողովը, չինական Ֆուծիան թանգարանում յատուկ ցուցադրութեամբ ներկայացել է Երեւանի պատմութեան թանգարանը:

«Շուրջ 140 երկիր են միացած նախաձեռնութեանը, այդ թւում նաեւ Հայաստանը: Դա մի մեծ ծրագիր է, որի մէջ մասնող երկրները փոխադարձ առեւտրի, տնտեսական եւ մշակութային համագործակցութեան միջոցով փորձում են աւելի համախմբուեն եւ նոր կլոպալ աշխարհում կառուցեն տնտեսական յարաբերութիւններ»:

Ֆուլչոնու նաւահանգստային քաղաքում, որտեղ տեղակայուած է Ֆուծիան թանգարանը, օրեր առաջ հզօր պատահող է տեղի ունեցել, ինչի պատճառով դադարեցուել են չուերթները: Չինական կողմի ներկայացուցիչները չեն կարողացել ժամանել Հայաստան, ուստի գիտաժողովին մասնակցել են առցանց:


Երկրաբանական հարուստ հաւաքածուով յայտնի այդ թանգարանի հետ համագործակցութիւնը կարեւորում է Հայաստանի Երկրաբանական թանգարանի ղեկավար Գայեանէ Գրիգորեանը:

«Ֆուծիանի թանգարանն ընդգրկում է 36 հազար մեթր քառակուսի տարածք: Թանգարանների համախումբ է, կայ 2 բնագիտական թանգարան, կոչուում է դինոզավրերի թանգարան եւ բնութեան պատմութեան թանգարան»:

Չինական եւ հայկական թանգարաններն առաջիկայում նախատեսում են կնքել համագործակցութեան յուշագիր:

DADUR TRAVEL

Blessing of Holy Oil at Etchmiadzin 2023



Guided Trip Led by
Norayr Daduryan

AUTUMN TRIP TO ARMENIA
SEPT 25 - OCT 5 ↗

Trip Includes

- Roundtrip airfare from LAX via Lufthansa Airlines
- Transportation in Armenia
- Hotel accommodation at Marriott Hotel (double occupancy)
- Single Occupancy available for an additional \$600
- 6 lunches/2 dinners
- Entrance fee to all sightseeing destinations

\$3,099 per person
with flight

\$1,699 per person
land only

Book Now
(626) 660-9443
norayrdaduryan@gmail.com

Թիւ Չենք, Մարդ Ենք

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՐՍԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Ամենօրեայ մեր ներկայ կեանքին մէջ թիւերը իրենց կարեւոր դերը ունին: Թիւերը մեր ամենօրեայ բառարանին անբաժան մէկ մասը կը կազմեն: Օրինակ, երբ մէկը կը փորձէ մեզ խաբել, մեզի սպառնալ, մեզ շահագործել սովոր ենք ըսելու, «Թիւդ ունի՞մ, կրնամ ոստիկանութեան լուր տալ»: Երբ մէկը մեր գնահատանքին եւ համակրանքին առարկայ է, անոր կ'ըսենք, «Դուն ինձի համար թիւ մէկ բարեկամ ես»: Երբ մէկը իր արհեստին կամ արուեստին մէջ գերազանց տեղ կը գրաւէ իր տաղանդով եւ կատարումով՝ յաճախ կը նկարագրենք զայն իբրեւ «թիւ մէկ» արհեստավարժ կամ արհեստաւոր անձ մը:

Քրիստոսէ հինգ դարեր առաջ, հարաւային Իտալիոյ մէջ կ'ապրէր գիտնական փիլիսոփայ մը՝ Պիւթակորաս անունով, որ «Թուաբանութեան Հայր» կը կոչուէր: Ան կը հաւատար թէ այս աշխարհի մէջ ամէն ինչ թիւերու վրայ հիմնուած է եւ թիւերով կը բացատրուի: Եթէ ան ներկայիս ապրած ըլլար պիտի վկայէր թէ թիւերը որչափ տիրական եւ գործածական են մարդկային ընկերութեան մէջ:

Պահ մը եթէ մտածելու ըլլանք, պիտի նկատենք թէ որչափ թիւեր կը գործածենք մեր առօրեայ կեանքին մէջ, այն ատեն պիտի անդրադառնանք թէ որ աստիճան կախեալ ենք թիւերէ: Օրինակի համար, ամէնքս ալ ունինք տան հասցիի թիւ մը, մեր ինքնաշարժերու թիւերը, մեր ինքնաշարժ վարելու արտօնագրի թիւերը, մեր ծննդեան արձանագրութեան թիւը, մեր դրամատան հաշիւներու թիւերը, համակարգիչի թիւերը ու անոր յարակից այլ թիւեր, եւ դեռ երկար շարք մը այլ թիւերու: Եթէ այս բոլոր թիւերը համընդուն ըլլանք անոնք տասնեակներու կը հասնին:

Անտարակոյտ, թիւերը իրենց բարերար դերն ու կարեւորութիւնը ունին: Անոնք կը խնայեն ժամանակ եւ մարդոյժ տնտեսական զանազան գործունեութեանց եւ այլ մարդերու մէջ: Անկասկած անոնց գործածութիւնը կը դիւրացնէ մարդոց կեանքը:

Սակայն, թիւերը նաեւ ունին իրենց անպատեհութիւններն ու խոցելի կողմերը: Թիւերու աշխարհին մէջ փորձութիւն կայ մարդ արարածին անհատականութիւնը կորսնցնելու: Մարդ արարածը թիւ չէ, այլ անհատ է, անուն, արժէք եւ արժանապատուութիւն ունի: Թիւերով զայն ճանչնալ եւ զանազանել

ուրիշներէ ոչ միայն արդար չէ, այլ նուազագուծ թիւերով չէ:

Մարդ արարածը թիւ մը չէ, առարկայ մը չէ, ամբողջին մէջ իր մը չէ, անբան անասուն մը չէ, այլ Աստուծոյ պատկերով ստեղծուած էակ մը: Ըստ Մաղմոսերգուին, մարդ արարածը փառքով ու պատուով պսակուած էակ մըն է, Աստուծոյ բոլոր արարածներուն վերակացուն է (Մաղմոս 8.6): Աստուած հետաքրքրուած է իւրաքանչիւր մարդու կեանքով, անոր մտածումներով եւ գործերով, անոր անցեալով ու ապագայով: (Մաղմոս 139.1-4):

Ըստ մեր Տիրոջ, Յիսուս Քրիստոսի, Աստուած ամէն մէկուն կեանքին համար ծրագիր մը ունի եւ ոչինչ կը վրիպի անոր ուշադրութեան: Ամէն մարդու մազն իսկ համրուած է (Մատթ. 10. 30):

Այլ խօսքով, այս աշխարհի մէջ ամէն մարդ եզակի եւ առանձնաշատուկ անձ մըն է: Չկան երկու անհատներ որ հարիւր տոկոսով իրարու նման ըլլան: Որչափ ալ մարդիկ իրարու նմանին, տակաւին իրարմէ տարբեր են իրենց մարմինով, միտքով, խառնուածքով եւ բնաւորութիւնով: Աստուած իւրաքանչիւր մարդ իւրաքանչիւր առանձնաշատուկութիւններով ստեղծ է: Եւ իւրաքանչիւր անհատ իր դերն ու օգտակարութիւնը ունի:

Արդ, Աստուծոյ պատկերով ստեղծուած իւրաքանչիւր մարդու պարտականութիւնն է աստուածային նկարագրի պատկերը ցոլացնել իր ամենօրեայ կեանքով ու կենցաղով: Ամէն մարդու կոչումն ու պարտականութիւնն է արժեցնել այն կեանքը որ Աստուած շնորհած է իրեն: Իւրաքանչիւր անհատ աստուածային նպատակով մը դրուած է այս երկրագունդին վրայ:

Աստուծոյ համար մարդիկ թիւ չեն, այլ բանաւոր, ստեղծագործ էակներ, Ֆիզիքական, մտաւոր եւ բարոյական պարգեւներով օժտուած արարածներ, որոնք կը ծնին ազգի մը մէջ եւ ունին ազգային պատկանելիութիւն:

Արդարեւ, ամէն հայ աստուածային կարգադրութեամբ ծնած է, ան պատահականութեան կամ արկածի արդիւնք չէ: Հետեւաբար Աստուծոյ կամքն է, որ ամէն հայ մարդ պահէ իր ինքնութիւնը եւ հպարտ զգայ իր ինքնութեամբ: Ամէն հայ մարդ ապրի հայօրէն եւ արժանապատուութեան վսեմ զգացումով՝ պտոցնէ իր ազգային պատկանելիութիւնը: Ի գուր չէ, որ հայ բանաստեղծը կը պատգամէ, «Հայ ապրինք եղբայրք մարդկութեան մէջը, հայ կնքել է մեզ պատմութեան էջը»:

Արդ, ո՞վ հայրդի, ծանի՞ր գբեգ: Այս աշխարհի մէջ դուն սոսկ թիւ մը չես, այլ մարդ ես, հայ, մարդ:

Պատուհասի՞, Թե՞ Պատեհութեան Օրակարգ

ԴՈԿՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

«Իւրաքանչիւր պատուհասէ ետք կայ նոր պատեհութիւն մը» ժողովրդային ասացուածք

«Կ'ապրինք անբացատրելի զգացումներ, որոնք շատ են եւ խօսուելի: Չեմ կրնար ներկայացնել անոնց ծաւալը, որպէսզի կարենաս լաւ կերպով հասկնալ մեր վիճակը Արցախի մէջ»:

Վիքթոր Կարապետեանը Հայ աւետարանական ընկերակցութեան Արցախի գրասենեակի պատասխանատու-տնօրէնն է: Անոր մէջ երկար տարիներու տեւողութեան տեսած եմ համակ սէր եւ նուիրում՝ իր հոգեւոր եւ ազգային կոչումին: Ան հողին՝ Արցախին, կառչած հայն է, ան իր հոգեւոր եւ ազգային ինքնութիւնը շարժախաճ է հայրենի հողին հետ եւ, առանց յուսահատելու, կը գործէ մինչեւ այսօր՝ շրջափակման անհաւոր այս պայմաններուն մէջ:

Արցախի աւելի քան եօթը ամիսներու վրայ երկարող շրջափակումը ընդհանրապէս հայութիւնը եւ մասնաւորապէս արցախահայութիւնը դրած է շնչահեղձ ըլլալու աստիճանի հասնող կացութեան մը մէջ:

«Անբացատրելի զգացումներ կ'ապրինք,- Վիքթորն է խօսողը: 1990-ի պատերազմը ապրեցանք եւ հասանք մինչեւ քառասունչորս օրերու պատերազմը: Այս շրջափակումը տարբեր ողբերգութեան մը մէջ դրաւ Արցախը»:

Վիքթոր կ'ապրի իր եւ հայուն՝ իր ժողովուրդին ցաւը: «Եթէ ժողովուրդը հոգեպէս կը ճնշուի, նոյնքան եւ աւելի կը ճնշուի ֆիզիքապէս: Հաց ճարելու համար պէտք է կենսա երկար հերթի,- ըսաւ Վիքթոր: Շատ դժուար է տեսնել ծերունիներ, որոնք կը փորձեն կերակուր ճարել ապրելու համար»:

Վիքթոր կը տեսնէ, թէ ինչպէ՞ս արցախահայութիւնը կը փոխուի ներքնապէս՝ հոգեբանական առումով: Այս բոլորով հանդերձ, ան նոյնպէս կը տեսնէ եւ կ'ապրի հայուն անկոտորում կամքը: «Ոչ ոք կ'ուզէ զիջիլ,- ըսաւ Վիքթոր: Արցախահայութիւնը կ'ապրի արդարութեան համար եւ պատրաստ չէ զիջելու իր արդար կեանքը ապրելու տեսլականին»:

Վիքթոր պարտաճանաչ առաջնորդն է, որ չ'ուզեր զիջիլ: Անցեալ Յունիս ամսուն եւ անկախ շրջափակումին ստեղծած դժուար պայմաններէն՝ աւետարանական գրասենեակը չէ զլացած կազմակերպել 175 երեխաներու համար երկշաբաթեայ ճամբար մը: «Մանուկները պէտք ունին ուրախութեան, որմէ զրկուած են այս օրերուն», ըսաւ ան:

«Կ'ուզէի ըսել, որ լաւ եմ»: Միքայէլ Հաջեանն է՝ ծանօթ լրագրող եւ իմ լաւ բարեկամս: Երբ կը խօսէի Միքայէլի հետ, արդէն մէկ ժամէ աւելի հերթի կեցած էր հաց ճարելու համար: «Երկու հատ հաց կրցայ ձեռք ձգել», ըսաւ Միքայէլ:

Եթէ Միքայէլին համար հացը ֆիզիքական գոյութեան համար է, բայց անկէ շատ աւելի ան կը հաւատայ ազգային ինքնութեան եւ ազատ ապրելու գրաւականին: «Մենք կը պայքարինք այս իրավիճակին դէմ, բայց նաեւ՝ բոլոր արտաքին ճնշումներուն դէմ», ըսաւ Միքայէլ:

Միքայէլին կեանքը անընդհատ պայքար եղած է: Միքայէլին երկու երիտասարդ գաւակները՝ Նորայրը եւ Երուանդը, նահատակուած են արցախեան պատերազմներու ընթացքին: Անոնք քաջամարտիկներ են, որոնք իրենց կեանքը գոհեցին հայուն պայքարին համար: Նորայրը նահատակուեցաւ 2016-ին, իսկ Երուանդը՝ 2020-ին: Միքայէլ, որ իր գաւակներուն եւ



Արցախի ցաւը շարժած է իր սրտին ու կեանքին մէջ, կը շարունակէ ապրիլ պայքարի այս կեանքը: Միքայէլին կեանքը շատ սուղ արժած է իրեն համար, եւ չեմ ալ գիտեր, թէ կարելի է իր նահատակ գաւակներուն կեանքի գինը սահմանել նիւթական արժեքով: Բայց Միքայէլի կեանքին մէջ «յուսահատիլ» հասկացողութիւնը չկայ: «Մեր առաջնահերթութիւնը Բերձորի միջանցքի բացումն է, իսկ մեր գլխաւոր պահանջը՝ ինքնորոշման իրաւունքը», ըսաւ ան:

Շահան Գանտահարեան կ'ընդլայնէ ու կը լուսաբանէ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի յայտարարութիւնը («Ճանաչում յանուն փրկութեան») եւ կ'ըսէ. «Միջազգային այս բոլոր իրաւաւորութիւններու հիմնաւորումով կը ներկայանայ (խօսքը Արցախի Ազգային ժողովի մասին է, Հ. Ճ.) միջազգային հանրութեան՝ ճանաչում պահանջելով» («Ազդակ», 31 Յունիս 2023): Գանտահարեան կարեւոր կը նկատէ, որ «ճանաչում յանուն փրկութեան» պահանջը դառնայ «առաջնային համահայկական օրակարգ»:

Վիքէն Չըթըրեանի գիտակարգեմական յօդուածը, որ անգ-

լերէնով լոյս տեսաւ «Ալ Մաժալ-լա» կայքէջին վրայ, կը կրէ «Եօթը ամիսներու վրայ երկարած ամրացած շրջափակումը Ղարաբաղի մէջ» խորագիրը: Վիքէն կը ներկայացնէ՝ արցախեան հիմնահարցի պատմական-քաղաքական տուեալները, ներկայ շրջափակումի ահաւորութիւնը, շրջանին մէջ տիրող աշխարհաքաղաքական իրավիճակները, անոնց հաշուարկումները եւ այլն: Վիքէն Չըթըրեանի յօդուածին վերջաւորութեան կը կարդանք հետեւեալ վերլուծումը. «Պարտադրելով (խօսքը Ազգայնականի մասին է Հ. Ճ.) շրջափակումը աւելի քան եօթը ամիսէ ի վեր՝ այսօր Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքը կարելի չէ նկատել այլեւս ընտրանք: Ան դարձած է անհրաժեշտութիւն»:

Իսկ անհրաժեշտութիւնը. «Ճանաչում յանուն փրկութեան»:

Ասիկա հայուն համահայկական օրակարգն է այսօր: Դարձեալ Վիքթորը. «Մեր կեանքը մեր ձեռքերուն մէջ չէ, բայց մեր ձեռքերուն մէջ չեղած կեանքն էնք ուզեր հրաժարիլ», ըսաւ ան:

Վիքթորը հաւատացեալ եւ

Միասնութեան, Եղբայրութեան, Սիրոյ Ու Համերաշխութեան Պատգամ. Կիւմրիի Մէջ Տրուեցաւ Համահայկական 8-րդ Խաղերուն Մեկնարկը



Շաբաթ, 5 Օգոստոս 2023-ին, Կիւմրիի «Շիրակ» մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Համահայկական 8-րդ ամառնային խաղերու բացման հանդիսաւոր արարողութիւնը:

Բացման միջոցառումը մեկնարկեց Համահայկական նախորդ խաղերու մասին պատմող տեղեկատուական հոլովակով:

Այնուհետեւ բեմ բարձրացաւ Հայաստանի կրթութեան գիտութեան, մշակույթի եւ մարմնակրթութեան նախարարի տեղակալ Կարէն Գիւրջեանը, որ նախորդ բոլոր 7 Համահայկական խաղերու պատուիրակութիւններուն շքերթը ներկայացուցած է: Այս անգամ եւս աւանդույթը չխախտեցաւ:

Մարզադաշտ մտնող պատուիրակութիւնները ներկայացնելէ առաջ ունեցած կարճ ելոյթին մէջ Գիւրջեան ընդգծեց, որ Համահայկական մարզական խաղերը կայացած են, անոնք հիանալի դրսեւորում:

նով՝ Դրաստամատ Մուրատեանը:

Այնուհետեւ տեղի ունեցաւ Համահայկական 8-րդ խաղերու գլխաւոր ջահը վառելու արարողութիւնը. գլխաւոր ջահը վառեց Եւրոպայի վեցակի, աշխարհի քառակի ախոյեան եւ Ոլիմպիական խաղերու ոսկէ մետալակիր Արթուր Ալեքսանեանը:

Ջահը վառելէ յետոյ Խաղերու բացման հանդիսաւոր արարողութիւնը շարունակուեցաւ շքեղ հրավառութեամբ:

Համահայկական Խաղերու Համաշխարհայի Կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեանը իր ելոյթին մէջ նշեց, որ Համահայկական խաղերը այսօր իրաւամբ կը համարուին Հայրենիք-Սփիւռք կապերու ամենակայուն եւ գործնական առումով կայացած միջոցառումը: «Համահայկական խաղերը դարձան միասնութեան, եղբայրութեան, սիրոյ ու համերաշխութեան իսկական պատգամ այսօրուայ եւ գալիք սերունդներին համար: Համահայկական

բարձր նշանոցը մենք կարողացել ենք պահել, պահելու ենք եւ Օգոստոսի 19-ին արձանագրելու ենք, որ մեր հայրենակիցները, որոնք այստեղ են, հաճոյք ստացան Խաղերից, սիրեցին Հայաստանի Հանրապետութիւնը եւ յանձն առան վերադառնալ հայրենիք», ըսաւ Յարութիւնեան:

Հայաստանի Հանրապետութեան կամքը յաղթահարելու եւ ապրելու, զարգանալու եւ յառաջ ընթանալու՝ ի հեճուկա բոլոր բարոյութիւններին: Այսօր մի նոր խորհրդանիշ է մեր ապագայի համար, որովհետեւ մենք մտնում ենք մի պատմական շրջափուլ, որտեղ պետութիւն ունենալու մեր կամքը պէտք է մնայ անսասան, հայրենիքը պետութիւն



Արայիկ Յարութիւնեանը պարզեւտրուեցաւ Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի բարձրագոյն՝ Պատուոյ նշան շքանշանով՝ Համահայկական

դարձնելու եւ պետութիւնը հայրենիք ընկալելու մեր մտածելակերպը պիտի վերահաստատուի: Ուզում եմ ողջունել աշխարհի տասնեակ երկրներից Հայաստան ժամա-



րած են իրենց, մասնակիցներուն քանակն ալ հետզհետէ կ'աւելնայ: «Այսօր 41 պետութեան 179 քաղաքի 7161 պատուիրակ ժամանել է Հայաստան եւ մասնակցելու է Համահայկական 8-րդ ամառնային խաղերին», նշեց Գիւրջեան:

Այնուհետեւ մեկնարկեց հանդիսաւոր շքերթը, որուն ընթացքին մարզադաշտ մտան Համահայկական 8-րդ ամառնային խաղերու մասնակից քաղաքներուն պատուիրակութիւնները:

Շքերթին յաջորդեց Համահայկական խաղերու մարզիկի եւ մրցավարի երդման արարողութիւնը: Մարզիկներուն անունով երդուեցաւ Յովհաննէս Մարգարեանը, իսկ մրցավարներուն անու-

կական խաղերը մեծ մարզական տօնի միջոցով հայկականութեան, հայապահպանութեան, Հայաստանակեդրոն հայութեան միաւորման զաղափար են: Վստահ եմ՝ ցանկացած բանական մարդ սա հասկանում է», նշեց Զաքարեան:

Համահայկական ամառնային 8-րդ խաղերու կառավարման կազմակերպիչ կոմիտէի նախագահ, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Յարութիւնեան իր ելոյթին մէջ նշեց, որ կառավարական յանձնաժողովը այս ընթացքին ջանք է խնայած, որպէսզի այս Համահայկական խաղերը ըլլան լաւագոյնը պատմութեան ընթացքին: «Կարծում եմ, որ առաջին իսկ օրուանից մեր կողմից գրուած



ամառնային 8-րդ խաղերը լաւագոյնս կազմակերպելու եւ աշխատանքները համակարգելու համար: Այնուհետեւ ելոյթ ունեցաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Այսօրուայ այս տօնն առաջին հերթին ոգեկոչումն է մեր բոլոր նահատակների, որովհետեւ ի ցոյց է դնում մեր ժողովրդի,

նա՞մ մեր հայրենակիցներին, յատկապէս նրանց, ովքեր առաջին անգամ են Հայաստանում, առաջին անգամ են Կիւմրիում: Յոյս ունեմ՝ նրանք տեսնում են Կիւմրիի նոր վերածնունդը: Կիւմրին վերածնունդ է եւ վերափոխում է ամէն օր, եւ Հայաստանի Հանրապետութիւնն է վերափոխում ամէն օր», ըսաւ վարչապետը:

Հարի Քեյնի Փոխադրումը Ամենաթանկն է «Պայրընի» Պատմութեան Մէջ

Անգլիոյի հաւաքականի 30-ամեայ կեդրոնական յարձակող Հարի Քեյնի փոխադրումը դարձաւ ամենաթանկը Գերմանիոյ ախոյեան Միլնիթի «Պայրընի» պատմութեան մէջ, կը հաղորդէ Transfermarkt-ը: Լոնտոնի «Թոթենհեմը» անոր փոխադրումէն ստացած է 100 միլիոն եւրո: Հաւանական է նաեւ 20 միլիոն եւրո յաւելեալ նուէր յետագային:



«Պայրընի» նախորդ մրցանակահերթը Ֆրանսայի հաւաքականի պաշտպան Լուկաս Էրնանտեսն էր, որու համար 2019-ին միլնիթեան ակումբը Մատրիտի «Աթլէթիքոյին» վճարած էր 80 միլիոն եւրո: Այս ամրան էր նախատեսուել 45 միլիոն եւրոյի դիմաց տեղափոխուած է Ֆրանսայի ախոյեան ՊՍՅ:

Հարի Քեյնը «Պայրընի» հետ կնքած է չորս տարուայ պայմանագիր:

Լուկաս Սելարայեանի Առաջին Մարզումը Սեուտական Արաբիոյ «Ալ Ֆաթէ» Խումբին Հետ


Ֆուլթուրի Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Լուկաս Սելարայեանը առաջին մարզումը կատարած է Սէուտական Արաբիոյ մէջ: 31-ամեայ ֆուլթուրիստը միացած էր «Ալ Ֆաթէ» ակումբին, որու հետ կնքած է երեք տարուայ պայմանագիր: Սէուտական Արաբիոյ անցած առաջնութեան «Ալ Ֆաթէ» գրաւած էր 6-րդ տեղը:



Սելարայեանը 2020-ի Յունուարէն հանդէս կու գար ամերիկեան «Քոլումպուս Քրիու» խումբէն՝ 107 խաղերու ընթացքին նշանակելով 42 կոլ, կատարելով 23 կոլային փոխանցում:

«Ռեալ Մոսիետատ» Համաձայնութեան Եկած Է Արսէն Զախարեանի Հետ

Մոսկուայի «Տինամոյի» եւ Ռուսաստանի հաւաքականի 20-ամեայ կիսապաշտպան Արսէն Զախարեանը շուտով պիտի տեղափոխուի «Ռեալ Մոսիետատ»: Սպանական ակումբը համաձայնութեան հասած է Զախարեանի հետ, կը հաղորդէ Mundo Deportivo-ն:




«Ռեալ Մոսիետատ» այժմ կը բանակցի «Տինամոյի» հետ: Տեղափոխման գումարը կը կազմէ մօտ 12 միլիոն եւրո:

Անցած մրցաշրջանին Զախարեան Ռուսաստանի առաջնութեան եւ գաւաթի խաղարկութեան մասնակցած է 37 հանդիպման, նշանակած է 5 կոլ, կատարած է 7 կոլային փոխանցում:

«Տինամոյի» ղեկավարութենէն եւս յայտնած է, որ հնարաւոր է՝ Զախարեան այս ամրան փոխէ ակումբը:

«Ռեալը» Յաղթանակի Հասաւ Պիլպատի Հետ Խաղին

Սպանիոյ առաջնութեան առաջին հանգրուանին փոխախոյեան «Ռեալ» Պիլպատի մէջ մրցեցաւ «Աթլէթիկի» հետ եւ պարտութեան մատնեց 2:0 արդիւնքով:



Խաղի հաշիւը 28-րդ վայրկեանին բացաւ պրագիլցի յարձակող Ռոտրիգոն: Լա Լիկայէն ներս իր առաջին կոլը նշանակեց Արքայական խումբի նորեկ, 20-ամեայ անգլիացի կիսապաշտպան Զուտ Պելլիկեմը:

36-րդ վայրկեանին ան կրկնապատկեց իտալացի Կառլօ Անչելոտիի գլխաւորած խումբի առաւելութիւնը:

Երկրորդ հանգրուանին «Ռեալ» Օգոստոսի 19-ին կը հիւրընկալէ «Ալմերիային»:

«Խետաֆէ» - «Պարսելոնա»՝ Ոչ Մէկ Կոլ

Սպանիոյ առաջնութեան առաջին հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» հանդիպում ունեցաւ «Խետաֆէ» հետ: Արձանագրուեցաւ 0:0 հաւասար արդիւնք:


42-րդ վայրկեանին հեռացուեցաւ «Պարսելոնայի» պրագիլացի յարձակող Ռաֆինեան, որ արմուկով հարուածեց մրցակիցի գլխուն:

57-րդ վայրկեանին երկրորդ դեղին քարտի համար հեռացուեցաւ «Խետաֆէ» սպանացի յարձակող Խայմէ Մատոս:

70-րդ վայրկեանին կարմիր քարտ ստացաւ գաթալոնական խումբի գլխաւոր մարզիչ Զաւին, որ կը դժգոհէր մրցավարութենէն:

«Չելսին» Ու «Լիվերփուլը» Հաւասար

Անգլիոյի առաջնութեան առաջին հանգրուանին Լոնտոնի «Չելսին» ընդունեց «Լիվերփուլին»: Խաղը աւարտեցաւ հաւասար՝ 1:1 արդիւնքով:




Առաջինը յաջողութեան հասաւ գերմանացի ետերգեն Կլոպի գլխաւորած խումբը: 18-րդ վայրկեանին աչքի ինկաւ քրոլմպլիացի յարձակող Լուիս Տիասը:

Արժենթինացի Մաուրիսիօ Պոչետինօյի գլխաւորած խումբը պարտութենէն խուսափեցաւ ֆրանսացի պաշտպան Ակսել Տիասիի կոլի շնորհիւ:

Մեսիի Կոլն Օգնեց «Ինթեր Մայամիին» Հասնելու Կիսաեզրափակիչ

ԱՄՆ-ի եւ Մեքսիքի Լիկաներու գաւաթի խաղարկութեան քառորդ եզրափակիչին «Ինթեր Մայամին» մրցեցաւ «Շարլոթի» հետ եւ առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:



«Ինթեր Մայամիի» չորրորդ կոլը 86-րդ վայրկեանին նշանակեց աշխարհի ախոյեան Արժենթինի հաւաքականի 36-ամեայ յարձակող Լիոնել Մեսին:

«Ինթեր Մայամիի» խումբէն իր կատարած 5 խաղերու ընթացքին Մեսին արդէն նշանակած է 8 կոլ:

«Ինթերի» Յաղթանակը Ընկերական Խաղին՝ 4:2

Իտալիոյ գաւաթակիր եւ սուփերգաւաթակիր Միլանի «Ինթերը» ընկերական խաղին մրցեցաւ ալպանական «Էգնատիայի» հետ: Իտալացի Միմոնէ Ինձագիլի գլխաւորած խումբը յաղթեց 4:2 արդիւնքով:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» մեկնարկային կազմէն էր եւ փոխարինուեցաւ 73-րդ վայրկեանին:

ՊՍՅ-ի Մեկնարկը Յաղթական Զեր

Ֆուլթուրի Ֆրանսայի առաջնութեան առաջին հանգրուանին ախոյեան ՊՍՅ-ն սեփական խաղադաշտին վրայ մրցեցաւ «Լորիանի» հետ: Սպանացի Լուիս Էնրիկէի գլխաւորած խումբը բաւարարեցաւ՝ 0:0 արդիւնքով:

ՊՍՅ-ի խումբէն կը բացակայէին ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն, իտալացի կիսապաշտպան Մարկո Վերատին ու պրագիլցի յարձակող Նեյմարը:

ՊՍՅ-ն Ու Սփապեն Կառուցողական Բանակցութիւններ Ունեցած Են, Ֆուլթուրիստը Վերադարձած Է Ընդհանուր Խումբ

Ֆրանսայի ախոյեան ՊՍՅ-ի 24-ամեայ ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն վերսկսած է մարզումները փարիզեան խումբին հետ:



«ՊՍՅ-ի եւ Կիլիան Մփապէի միջեւ շատ կառուցողական եւ դրական բանակցութիւններ էն յետոյ ֆուլթուրիստը վերականգնած է տեղը առաջին խումբի մարզումային կազմին մէջ», - կը նշուի փարիզեան ակումբի պաշտօնական հաղորդագրութեան մէջ:

Նախապէս ՊՍՅ-ն վերջնագիր ներկայացուցած էր ֆուլթուրիստին եւ հեռացուցած յայտացուցակէն: Մփապէն նախնական բանաւոր պայմանաւորուածութեան համաձայն գործող պայմանագիրը մինչեւ Յունիսի 31-ը պէտք է երկարաձգէր մէկ տարիով՝ մինչեւ 2025-ի Յունիսը: Մփապէն հրաժարած էր կատարել իր այդք խոստումը: Ան կը ցանկար որ մէկ մրցաշրջան եւս մնայ ՊՍՅ-ի խումբին մէջ եւ յաջորդ ամրան ազատ գործակալի կարգավիճակով անվճար տեղափոխուէր Մատրիտի «Ռեալ»:

Աստղագիտութեան Ոլորտը Մէկ Վայրի Մէջ Համախմբած է Հայ Պատանիներ՝ Հայաստանէն Եւ Սփիւռքէն



Թուշող սարքերու շինութիւն, հրթիռաշինութիւն, տիեզերքի ուսումնասիրութիւն, այս ոլորտներէն ներս գիտելիքներ ձեռք բերելու նպատակաւ՝ արդէն երրորդ տարին հայրենիքի մէջ կը համախմբուին սփիւռքահայ պատանիներ:

«Ճամբարին հիմնական նպատակն է մեր պատանիներուն ծանօթացնել ոլորտէն ներս տեղի ունեցող զարգացումները: Խօսքը արբանեակաշինութեան, ընդհանուր տիեզերական արհեստագիտութեանց եւ արբանեակներու միջոցաւ ստացուած տեղեկութեան յետագայ վերլուծութեան մասին է, որ մեր կարծիքով՝ յետագային կրնայ օգնել մասնագիտական կողմնորոշման», - ըսաւ նա:

Ճամբարը տեղի ունեցաւ օգոստոս 6-էն 12-ը՝ Դիլիջանի մէջ: Դիմորդներու թիւը այս տարի աննախադէպ էր: Յայտ ներկայացուցած 1029 պատանիներէն ընտրուած էր 107 հոգի: Ճամբարին երկրորդ անգամ մասնակցելու հնարաւորութիւն ստացած է Ջաւախքի Տամալա գիւղէն հայրենիք ժամանած Մարիամ Սահակեանը:

«Հետաքրքրուած ըլլալով տիեզերքով՝ մեծ ցանկութիւն ունիմ զայն բացայայտելու, եւ տիեզերական ճամբարը ինծի այդ հնարաւորութիւնը կու տայ՝ համատեղելով նոր ծանօթութիւններուն հետ եւ ինքզինքս բացայայտելով տարբեր ոլորտներէ ներս», - ըսաւ նա:

14-ամեայ ապագայ աստղագէտ

Խաչատուրն ալ Հայաստան եկած է Արաբական Միացեալ Էմիրութիւններէն:

«Ես դասընթացներով հետաքրքրուած եմ արբանեակներու գծով եւ ներկայացուցման պատրաստելով», - ըսաւ նա:

Ճամբարին երրորդ օրը, նախարար Ռոպերթ Խաչատրեանը շրջած է աշխատարաններէն ներս եւ ծանօթացած է կատարուած աշխատանքներուն: Մասնակիցները նախարարին ներկայացուցած են անօդաչու սարքերով կատարած լուսանկարները, արբանեակներէն ստացած արդիւնագործ եւ արխիւային տուեալներու մշակումները, վերլուծութիւնները, եզրակացութիւններն ու առաջարկութիւնները: Մասնակիցներուն շարքին է նաեւ 15-ամեայ Խաչատուրը՝ Ռուսիոյ Օմսկ քաղաքէն:

«Ես տիեզերական ճամբարէն ունիմ շատ լաւ տպաւորութիւններ: Ամէն ինչ շատ լաւ ու հետաքրքրական ձեւով կ'անցնի: Շատ կը հաւնիմ աչտեղի մարդիկ, իրենց ջերմութիւնն ու ուրախութիւնը, դասընթացները, կազմակերպուող խաղերը, պարերը եւ մնացեալ բոլորը», - ըսաւ նա:

Բացի դասախօսութիւններէն եւ ոլորտային աշխատաժողովներէն, ճամբարականներուն համար կը կազմակերպուին նաեւ արշաւներ, ազգային պարերու ուսուցում, ֆիլմերու դիտում, ինչպէս նաեւ՝ հետաքրքրական հանդիպումներ ու միջոցառումներ:

Ստեփանակերտի Արտաքին Քաղաքական

Շարունակուած էջ 2-էն

ուսուցողական լինելու մասին խօսոյթը:

Նոյն իրավիճակն էր նաեւ ամիսներ յետոյ, երբ ատրպէյճանական կողմի պատճառով տապալուեց Օգոստոսի 1-ին Բրատիսլավայում ծրագրուած հանդիպումը: Այդ չկայացած հանդիպման մասին ֆէյսպուքեան իր էջում յայտնել էր ԼՂՀ նախագահին կից գործող հակաճգնաժամային խորհրդի նախագահ Տիգրան Պետրոսեանը: Արցախի արտգործնախարարութիւնը այդ նորութեանը անդրադարձել էր միայն յաջորդ օրը: Այսինքն, այն կառուցը, որը լիազօրուած է որոշում կայացնել նման զգայուն հարցերի շուրջ խօսելու վերաբերեալ, պարտադրուած էր արձագանքել այլ պաշտոնյայի յայտարարութեան պատճառով:

Արտաքին քաղաքական հարցերով համակարգուած ուղերձներէ բացակայութիւնը խնդիրներ է ստեղծել նաեւ Լաչինի միջանցքից վազիֆ Խաչատրեանի առեւանգման վերաբերեալ Ստեփանակերտի յայտարարութեան հարցում: Առեւանգումից յետոյ Արցախի պետնախարարի խորհրդական Արտակ Բեգլարեանը զրառում կատարեց՝ նշելով, որ Խաչատրեանը 1991-1994 թուականներին մասնակցել էր Արցախի պաշտպանութեանը, բայց ռազմական յանցագործութիւններ չի իրականացրել: Բեգլարեանի այս գրառումից օրեր անց

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը Արցախի հանրային հեռուստատեսութեանը տուած հարցազրոյցում արդէն նշեց, որ վազիֆ Խաչատրեանը չի մասնակցել ռազմական գործողութիւններին Ղարաբաղեան առաջին պատերազմի ընթացքում:

Այսպիսի կարեւորագոյն ուղղութեամբ տարբեր պաշտօնեաների անկազմակերպ ու չհամակարգուած գործունէութիւնը չի կարող բացասական հետեւանքներ չունենալ Արցախի համար: Պէտք է գիտակցել, որ հակառակորդ կողմը խիստ համակարգուած ու ուղղահայեաց սկզբունքներով գործող արտաքին քաղաքականութիւն է վարում: Հետեւաբար, առաջին հերթին Արցախի նախագահի կողմից պէտք է հրատապ քայլեր ձեռնարկուեն այս ոլորտը համակարգելու ուղղութեամբ:

Արտաքին քաղաքական ուղերձներ յղելու, այդ թեմայով տեսակէտներ յայտնելու առաջնահերթութիւն պէտք է ունենան նախագահն ու արտգործնախարարութիւնը: Բոլոր միւս մարմիններն ու պաշտօնեաները, որոնք ցանկանում են դերակատարութիւն ունենալ այս ուղղութեամբ տարուող աշխատանքներում, պէտք է իրենց գործունէութիւնը ծաւալեն կամ փակ ռեժիմով, կամ ԱԳՆ-ի հետ խորհրդակցութիւնից յետոյ: Արտաքին քաղաքական ուղղութեամբ «բազմաձայնութեանը» պէտք է վերջ տալ: «ՄԻՎԻԼՆԵԹ»

Փրոֆ. Վահագն Տատրեանի Մահուան

Շարունակուած էջ 8-էն

րութիւնները հրատարակուած են, ֆէյսիվանիոյ, Գանսասի, Արիզոնայի, Պըրքլիի, Գոլիմպիոյ, Ֆորտ Էլ Եւ այլ համալսարաններու իրաւաբանական թերթերուն մէջ:

Երեկոյթի աւարտին՝ բեմ հրաւիրուեցաւ օրուան մեծարեալ փրոֆ. Մայքըլ Պիգոլըր եւ իրեն շնորհուեցաւ «2023 Ականաւոր Յեղապանագէտի Ուսումնականութեան» անուան մետալը, ձեռամբ Պոլսհայ Միութեան ատենապետ՝ Տոքթ. Մարք-Մուրատ Քէչկերի: Այս առթիւ մեծարեալը՝ բացառիկ յարգանքով եւ երախտագիտական զգացումներով արտայայտուեցաւ վեր-

ջերս մահացած փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի մասին, որուն պատճառով մօտէն իրազեկ դարձած էր Հայոց Յեղապանութեան մասին: Մեր արդար դատի յաղթանակին համար՝ ան խիստ կենսական համարեց հետեւողական ճիշդութեամբ լայնատարած համաշխարհային մակարդակով կատարուելիք աշխատանքները:

Չեռնարկի զեղարուեստական բաժինին իր մասնակցութիւնը բերաւ շնորհալի տուտուկահար Ալպըրթ Վարդանեան:

Աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին ներկայները առիթն ունեցան մօտէն ծանօթանալու եւ զրուցելու յայտադրի մասնակիցներուն հետ:

Սկիզբ Առաւ «Ներուժ 4.0» Դրամաշնորհային Ծրագրի Յայտերուն Ընդունման Փուլը

«Ներուժ 4» ծրագիրը այս տարի Հայաստանի մէջ կը համախմբէ 40 գործարկուող ընկերութիւն: Ծրագիրը տարբեր երկրներէն կը հրաւիրէ սփիւռքահայ մասնագէտները՝ աջակցելու Հայաստանի տնտեսական առաջընթացին եւ գործարկման կենսոլորտի զարգացման:

Ծրագրին մասնակցելու համար գործարկուող ընկերութիւնները ազատ են ոլորտի ընտրութեան հարցին մէջ: Բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարարութիւնը այս տարի յաղթող ընկերութիւններուն համար աւելի մեծ տարեհաշիւ կը նախատեսէ իրենց գաղափարը կեանքի կոչելու համար:

«Կը նախատեսենք մինչեւ 90 միլիոն դրամի չափով տրամադրել դրամաշնորհ, որմէ մինչեւ 30 միլիոն

դրամը կը տրամադրուի սկսնակ ընկերութիւններուն, իսկ մինչեւ 60 միլիոն դրամ կ'ըլլան առաջին, երկրորդ, երրորդ տեղերուն համար նախատեսուած արդէն արտադրանք ունեցող անձնակազմերուն համար, - յայտարարեց նախարարութիւնը:

2018 թուականէն ի վեր իրականացուող ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ պայման է, որ հորձարկուող անձնակազմի անդամներուն մեծ մասը ըլլան սփիւռքահայեր: Յայտը ներկայացնելուն նախորդող 24 ամսուան ընթացքին ստացած չըլլան դրամաշնորհ Բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարարութեանէն, ցանկան Հայաստանի մէջ հիմնել եւ զրանցել գործարկում եւ առնուազն մէկ տարի բնակին այստեղ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

Հայաստանայց Առաքելական Եկեղեցույ

Շարունակուած էջ 8-էն

Թեան մասնաւոր ծրագիրներ նախաձեռնելու մասին:

Հետեւեալ նիւթերը եւ քննարկումի առարկայ դարձան.- Ուխտագնացութիւն դէպի Հոռոմ, Շնորհալի Հայրապետի 850 ամեակին առթիւ, հոգեւորականաց հոգեմտաւոր վերանորոգութեան՝ առանձնացման եւ հոգեւոր մտամփոփման պահեր, սարկաւազաց մասնաւոր դասընթացքներ, համացանցը հրաշալի միջոց՝ հարողակցութեան, բարոյական ժամանակակից խնդիրներ, Արխիւային նիւթեր, եւ երեք թեմերու ապագայ հանդիպումներու ու համագործակցութեան վերաբերող օրակարգային զանազան նիւթեր:

Գանատահայոց թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան եւ Արեւելեան թեմի Առաջնորդ Հոռ. Տ. Մեսրոպ Վրդ. Պարսամեան Արեւմտեան թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանէ իրագեղ դարձան Հայաստանեայց Առաքելական Եկեղեցույ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի հաստատման 125 ամեակին նուիրուած զանազան նախաձեռնութիւններու մասին: Ժողովին անդրադաձ կատարուեցան նաեւ Գանատայի թեմի 40ամեայ նշման համդիսութիւններու մասին:

Երեք Առաջնորդ հայրերը ուրախութեամբ անդրադաձրան այս տարուայ Հոկտեմբեր ամսուայ ընթացքին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարուելիք Միւսուորհոյութեան արարողութեան: Ողջ հայութեան համար հոգեւոր ուրախութեան ամիս պիտի ըլլայ երբ հազարաւոր ուխտաւորներ աշխարհի տարբեր երկիրներէ պիտի փութան Մայր Հայրենիք, Սուրբ Էջմիածին, մասնակցելու տեղի ունենալիք միւսուորհոյութեան հոգեպարար արարողութեան: Այս ծիրէն ներս ուխտագնացութեանց եւ տարուող այլ նախապատրաստական աշխատանքներու մասին անդրադաձ կատարուեցաւ:

Պատուհասի՞, Թե՞ Պատեհութեան Օրակարգ

Շարունակուած էջ 15-էն

նուիրեալ արցախցին է: «Մեր հաւատքը Աստուծոյ վրայ է: Մեր յոյսը երբեք չի մարիր»: Այս շնորհ յոյսն է, որ կ'ապրի եւ կ'ապրեցնէ: Այս վիքթորին, արցախահայութեան եւ հայ ժողովուրդին յոյսն է: Այս յոյսով մենք ապրեցանք մեր պատմութեան բոլոր ժամանակահատուածներուն հասանք մինչեւ այսօր: Եւ պիտի շարունակենք այս յոյսով:

Արցախի շրջափակումը եւ անոր ստեղծած մարդկային ահաւոր աղէտը չեն կրնար ապարդիւն դուրս գալ: Ժողովրդային ասացուածքը շատ դիպուկ է այս իմաստով. «Ամէն պատուհասի մէջէն դուրս կրնայ գալ նոր պատեհութիւն մը»: Այս աղէտը՝ պատուհասը, դուրս պիտի բերէ նոր պատեհութիւն մը: «Մենք արժանապատիւ ձեւով դուրս պիտի գանք այս

ի տես Հայաստանի ու մասնաւոր Արցախահայութեան ներկայ իրավիճակին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցույ Հիւսիսային Ամերիկայի երեք թեմակալ Առաջնորդները յանձն առին մարդասիրական ծրագիրներով եւ մեր հաւատաւոր հայորդիներու նիւթաբարոյական մասնակցութեամբ նեցուկ կանգնելու Հայաստանի ու Արցախի մեր ժողովուրդի զաւակներուն:

Ժողովական նիստերու աւարտին երեք հոգեւոր Առաջնորդները աղօթք բարձրացուցին առ ամենաբարին Աստուած անսասան պահելու Մայրենի Սուրբ Եկեղեցին եւ Հայաստան աշխարհը, մաղթելով, որ նոր միւսուոր հաստատ պահէ մեր Հայրենիքն ու Մայր Աթոռը, արեւշատ օրեր պարգեւէ Հայոց Հայրապետին եւ անշէջ պահէ մեզ յաջորդող սերունդները, բազմադարեայ հարուստ ժառանգութեամբ շարունակելու մեր կեանքի ընթացքը:

Կիրակի, 6 Յուլիսի առաւօտեան, Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր տաճարին մէջ Առաջնորդ Սրբազան Հօր հանդիսապետութեամբ սկսաւ ժամերգութիւնը: Օրուան Սուրբ Պատարագը մատոյց Արեւելեան թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ Վրդ. Պարսամեան: «Հայր մեր»էն առաջ Տ. Յովնան Արք. Տէրտէրեան պատարագիչ Հայր Սուրբը ներկայացուց հաւատացեալներու բազմութեան: Օրուայ պատգամը փոխանցեց Արեւելեան թեմի Առաջնորդ Հայր Սուրբը: Սուրբ Պատարագին ներկայ գտնուեցան Գանատահայոց թեմի Առաջնորդ Տ. Աբգար Եպս. Յովակիմեան եւ խումբ մը հոգեւորականներ:

Ս. Պատարագի աւարտին առաջնորդարանի «Արմէն Համբար» դահլիճին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերով Տ. Աբգար Եպս. Յովակիմեան եւ Տ. Մեսրոպ Վրդ. Պարսամեան իրենց ողջոյնի խօսքը ուղղեցին հաւատացեալներուն: Հիւրասիրութեան աւարտին, հաւատացեալները հոգեկան մխիթարութեամբ բաժնուեցան առաջնորդարանէն:

Դիւան Առաջնորդարանի

վիճակէն»: Միքայէլի վերջին խօսքն էր մեր գրոյցի ընթացքին: «Արցախի մէջ ստեղծուած այս շարժումը պէտք է դառնայ համահայկական: Սփիւռքին դերը այս իմաստով շատ կարեւոր է», ըսաւ Միքայէլ: Չուշացաւ Վիքթորին գնահատականը. «Մարդկային կեանքին արժէքը շատ աւելի բարձր է, քան՝ սահմանազատումի եւ քաղաքական այլ հաշուարկները: Կան գրուած եւ չգրուած օրէնքներ, որոնք մարդուն կողքին են եւ անոր կու տան ապրելու իրաւունք», եզրափակեց Վիքթորը:

Այսօր Արցախի ինքնորոշման իրաւունքը ընտրութիւնն է այլեւս: Ան անհրաժեշտութիւնն է: Հայր՝ Հայաստան, սփիւռք եւ Արցախ, պիտի հաւատայ եւ կառչի այս անհրաժեշտութեան: Այս անհրաժեշտութիւնը արցախահայուն ապրելու իրաւունքն է: Ապրելու իրաւունքը՝ արժանապատիւ ձեւով: Այս իրականութիւնը քաղաքական թէ

Հայկական «Փափուկ Ուժը» Սփիւռքի Մէջ

Շարունակուած էջ 13-էն

ըոք ծրագրում եւ հետեւողականութիւն, որովհետեւ կ'ընդգրկէ մշակութային, գիտական, առեւտրական եւ համոզիչ այլ լծակներու օգտագործումը ազդեցութիւն բանեցնելու եւ հանրային կարծիք ձեւաւորելու համար: Փափուկ ուժը արդիւնաւէտ կերպով գորաշարժի ենթարկելու համար պետութիւնն ու սփիւռքեան կառույցները պէտք է ժամանակ եւ ջանք ի գործ դնեն մշակութային մեր ժառանգութիւնը, գիտական նուաճումները եւ առեւտրական ներդրումը միջազգային հանրութեան ցոյց տալու եւ անոր սեփականութիւնը դարձնելու համար: Փափուկ ուժի ամուր հիմերը կառուցելով՝ պետութիւնն ու հաստատութիւնները դրական դիմագիծ մը կրնան ստեղծել, որ կ'արձագանգէ եւ կ'արդիւնաւորուի ճգնաժամի մը ստեղծումէն առաջ՝ ներգործելով հանրային կարծիքին վրայ եւ ազդեցութիւն ակնկալելով: Արդիւնաւէտ գործի գետինը պէտք է պատրաստ ըլլայ ճգնաժամէն շատ առաջ: Մտածուած, լուրջ եւ ծրագրուած ջանքերը էական են փափուկ ուժի արդիւնաւէտ օգտագործման եւ անհատական կապերէն դուրս, աւելի լայն ծաւալով ազդեցութիւն ունենալու համար:

Փափուկ ուժի կիրարութեան գործընթացը պէտք է ունենայ յստակ պատասխանատուութիւն, նպատակ ու գործունէութեան ծրագիր: Օրինակ՝ խորհրդային Հայաստանի մշակութային կապերը սփիւռքի հետ: խորհրդային Հայաստանէն Լիբանան, Սուրիա եւ սփիւռքեան այլ համայնքներ կ'այցելէին բազմաթիւ երգիչներ, պարախումբեր, թատերախումբեր, բանաստեղծներ, գրողներ ու մշակութային գործիչներ: Մեծ հոգեւորութիւն կը յառաջացնէին համայնքային կեանքին մէջ: Նաեւ, խորհրդային Հայաստանը կը հրատարակէր արեւմտահայերէն գիրքեր եւ զանոնք

կ'ուղարկէր սփիւռքի դպրոցներ: Ուստի, երբ ունիս ծրագիր եւ քու արտաքին քաղաքականութեան կամ որեւէ քաղաքականութեան մէջ կը կարեւորես տուեալ գործօնը, ապա գայն պէտք է ընդգրկես քու քաղաքական կամ պետական օրակարգին վրայ: Երկրորդ կարեւոր խնդիրը գայն իրականացնելու միջոցներն ու յարմար մարդուժը գտնելն է, եւ փորձը ցոյց կու տայ, որ նման մօտեցումներն արդիւնք կու տան:

Այսօր, երբ կը քննարկենք հայկական փափուկ ուժի իրավիճակը կամ Հայաստանի յարաբերութիւնները սփիւռքի հետ, սկսելով մշակուցիչ, ակնյայտ կը դառնայ, որ վերջին երեսուն տարիներուն որեւէ լուրջ աշխատանք չէ կատարուած: Իրականութիւնը այն է, որ Հայաստանի պետութիւնը չէ կրցած իր «փափուկ ուժ»ը դրսեւորել եւ կիրարկել սփիւռքի մէջ: Սփիւռքն ալ իր հերթին չէ կրցած լրիւ իմաստով իր «փափուկ ուժ»ը օգտագործել իր իսկ հաւաքական կամ համայնքային կարիքներուն համար:

Նիւթական սահմանափակ միջոցներու իրողութիւնը եւ մեր «փոքր ազգ» ըլլալու հանգամանքը մատնանշողներու թիւը շատ է: Բիւր մարտահրաւէրներ վստահաբար կան, հարցը առաջնահերթութիւններու մասին է: Հայաստանի պետութեան համար, սփիւռքի փափուկ ուժի օգտագործումը որքանո՞վ կարեւոր է կամ ուղղափարական ի՞նչ արժէք ունի: Եթէ ուղղափարական անհրաժեշտութիւնն է, ուրեմն պէտք է առաջնահերթութիւն տալ համապարփակ ծրագրի մը մշակումին եւ ըստ այնմ անդրադառնալ միջոցներու ստեղծման հարցին: Ծրագրումէն առաջ նիւթականի մասին խօսելը կը խափանէ փոփոխութեան որեւէ նախաձեռնութիւն: Հետեւաբար, կարեւոր է կեդրոնանալ հայեցակարգումին եւ ծրագրումին վրայ՝ իբրեւ նախապայման:

«Տարբերակ21»

բոլոր այլընտրանքներէն վեր է: Հայուն արժանապատիւ ձեւով ապրելու իրաւունքը այսօր դարձած է անհրաժեշտութիւն: Անհրաժեշտութիւնը «ձանաչում յանուն փրկութեան» իտէալ-կարգախօսը իրականացնելու մէջ է: Իրականացնելու համար կայ կարեւոր աշխատանքային տեսլական: Տեսլական, որ պէտք է վերածուի համահայկական օրակարգի:

«Ձանաչում յանուն փրկութեան»:

Բոլորս միասին՝ Հայաստանի, Արցախի եւ սփիւռքի մէջ, արժէ, որ կառչինք, հաւատանք եւ աշխա-

տինք այս անհրաժեշտ օրակարգին ու անոր իրագործումին համար: Այս օրակարգը բոլորս միասին դարձնենք համահայկական:

Արցախը այսօր մեծ պատուհասի մէջ է: Հայութիւնը մեծ պատուհասի մէջ է: Փորձենք այս պատեհութիւն մը, եւ այս իրականացնելու համար պատուհասի օրակարգը պէտք է վերածել նոր պատեհութեան օրակարգի:

Պատեհութեան օրակարգը: Հայուն համահայկական փրկութեան օրակարգն է: Եւ կրնանք ընել:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՇՈՂԻ ՇԱՍԱՐ)

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՇԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**



ARMENIAN INDEPENDENCE DAY Festival

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

ՓԱՌԱՏՕՆ

SUNDAY, SEPTEMBER 17, 2023

STARTING AT 11:00AM

VERDUGO PARK / GLENDALE

1621 CANADA BLVD, GLENDALE, CA 91208

ORGANIZED BY

NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

- LIVE MUSIC
- ARMENIAN FOOD
- FREE ADMISSION**
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
- KIDS GAMES
- ART EXHIBITION

To reserve your vendor booth, please call Nor Serount Cultural Association
 Ձեր կրպակները ապահովելու համար, հեռաձայնեցե՛ք՝ Նոր Սերունդ Միություն
(818) 391-7938